

Նոր Ձերբակալութիւններ Յրանդ Տինքի Սպանութեան Գործով



Հրանդ Տինքի սպանութեան հինգերորդ տարելիցի առթիւ ցոյց Պոլսայ մէջ՝ Յունուար 19, 2012-ին

Թուրքիոյ մէջ նոր ձերբակալութիւններ կատարուած են Հրանդ Տինքի սպանութեան վերաբացուած գործով:

Ռազմական ոստիկանութիւնը ձերբակալած է Ջէյնէլ Ապիտին Եաւուզին: Ըստ թրքական ազդերիւններու, Տինքի սպանութիւնը գործադրելու համար սկիզբը իրեն ընտրած են, բայց յետոյ իրականացնողը փոխուած է եւ Տինքի վրայ ատրոմանակով կրակած է Օզիւն Մամասթ, որ այդ ժամանակ դեռահաս էր ու դատապարտուեցաւ 23 տարուայ բանտարկութեան:

Վերաբացուած գործով Ջէյնէլ Ապիտին Եաւուզ ձերբակալուած ու բանտարկուած է Տրապիզոնի նահանգի Պիլիթլի քաղաքը: Ոստիկաններ անոր ձերբակալած են փողոցը եւ բանտարկած են:

Երկրորդ ձերբակալուածը Օսման Հայալն է: Եաւուզի ձերբակալութեան մի քանի ժամ յետոյ ան ձերբակալուած է՝ դարձեալ Տրապիզոնի մէջ: Օսման Հայալ Եասին Հայալի եղբայրն է, որ ցմահ բանտարկութեան դատապարտուած է Տինքի սպանութիւնը դրդելու մե-

ղադրանքով:

Հայկական «Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Տինքը սպանուեցաւ 2007-ի Յունուար 19-ին:

Մօտ երկու տասնեակ կասկածելիներ ներգրաւուած էին սպանութեան գործով, սակայն առաջին ատեանի դատարանը չհիմնաւորուած համարեց կազմակերպուած, գինուած յանցախուժմբի գոյութիւնը: Դատարանը որոշեց, որ յանցագործութիւնը կատարած են անհատ, առանձին մարդիկ, որոնցմէ միայն երկուքը դատապարտուեցան. Տինքի սպանութիւնը անմիջականօրէն գործողը եւ յանցագործութիւնը հրահրողը, կազմակերպիչը:

Սակայն անցեալ տարի Թուրքիոյ վերաքննիչ դատարանը վերանայեցաւ ստորադաս ատեանի որոշումը: Նախապէս արդարացուած բոլոր 18 կասկածելիները դարձեալ պէտք է քննութեան ենթարկուին:

Անցեալ Սեպտեմբեր 17-ին գործը պաշտօնապէս վերաբացուե-

Շաբ.ը էջ 4

Խորհրդարանական Մայք Կաթօ Բանաձեւ Ներկայացուց` Լեռնային Ղարաբաղը Անկախ Պետութիւն Ճանչնալու Վերաբերեալ

Քալիֆորնիոյ Խորհրդարանի անդամ Մայք Կաթօ, որ կը ներկայացնէ Կլէնտէլը, Պըրպէնքը եւ մօտակայ շրջանները Նահանգային Օրէնդիր Մարմինէն ներս, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ինքնիշխան պետութիւն ճանչնալու վերաբերեալ բանաձեւ ներկայացուց:

Օրէնսդրական այս նախաձեռնութեան հարցով Մայք Կաթօ սերտօրէն կը համագործակցի Ամերիկահայ կազմակերպութիւններու հետ: «Համայնքը միասնական է Լեռնային Ղարաբաղի ճանաչման աջակցելու հարցով», - յայտարարեց Կաթօ:

Հայ Ամերիկեան Խորհուրդի ատենապետ Սեւակ Խաչատուրեան ողջունելով Մայք Կաթօյի այս նախաձեռնութիւնը յայտարարեց, «AJR 32 թիւ բանաձեւի ներկայացումը՝ խորհրդարանական կաթօյի կողմէ, անբաժան մէկ քայլն է Լեռնային Ղարաբաղի որպէս ինքնիշխան պետութիւն ճանչնալու գծով: Հայ Ամերիկեան Խորհուրդը կ'ողջունէ Խորհրդարանի անդամ Մայք Կաթօյի քաջարի եւ հերոսական կեցուածքը՝ տարածաշրջանէն ներս ժողովրդավարութիւնը եւ մարդու իրաւունքները ամրապնդելու ուղղութեամբ: Այս բանաձեւը պիտի ծառայէ որպէս յաղթանակ, ոչ միայն հայ ծագում ունեցողներուն համար, այլ նաեւ աշխարհի բոլոր ժողովուրդներուն՝ որոնք մեծ կարեւո-



Քալիֆորնիոյ Խորհրդարանի անդամ Մայք Կաթօ

րութիւն կու տան ժողովրդավարութեան, ազատութեան եւ արդարութեան համար»:

«Առաւել ուրախ եմ բանաձեւը ներկայացնելու այն օրը, երբ ամբողջ աշխարհի հայութիւնը, իրենց ընտանիքներուն եւ մտերիմներուն հետ կը նշեն Քրիստոսի Սուրբ Ծնունդը», - այս առթիւ յայտարարեց Մայք Կաթօ:

Քալիֆորնիոյի օրէնսդիր մարմինի երկու պալատներուն կողմէ վաւերացուելէ ետք, բանաձեւը պիտի փոխանցուի Միացեալ Նահանգներու նախագահին, Ծերակոյտի եւ Ներկայացուցիչներու Տան քարտուղարներուն եւ Գոնկրէսէն ներս Քալիֆորնիոյ բոլոր ներկայացուցչներուն:

Մասնագէտի Կարծիքով Հայաստանի մէջ Պայթիւնապատճառ Իրավիճակ Ստեղծուած է

Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Փիլիսոփայութեան, սոցիոլոգիայի եւ իրաւունքի ինստիտուտի տնօրէն Գէորգ Պողոսեանի համաձայն, Հայաստանի մէջ ստեղծուած է պայթիւնապատճառ իրավիճակ:

Սոցիոլոգիական գիտութիւններու դոկտորի կարծիքով, այդ մասին կը վկայեն իրենց հետազոտութիւնները, եւ եթէ իրադրութիւնը երկրէն ներս չփոխուի՝ առաջին հերթին չբարելաւուի մարդկանց սոցիալ-տնտեսական իրավիճակը, ապա յառաջիկային ականատես կը դառնանք պայթիւնի, այսինքն՝ հանրային ընդվզումներու եւ ըմբոստութեան:

Պողոսեան ընդգծեց սակայն, որ ինք չի կրնար յստակ ըսել՝ արդեօք հանրային ընդվզումները կը հանգեցնեն իշխանափոխութեան, թէ՞ ոչ:

Պողոսեանի խօսքերով, երկրէն ներս պայթիւնապատճառ իրավիճակի պատճառը միայն բարդ սոցիալ-տնտեսական իրադրու-

թիւնը չէ: Աստիճանաբար, հայաստանեան հանրութիւնը աւելի ազատ կը դառնայ թէ՛ արտայայտուելու, թէ՛ գործելու առումով:

«Առաջինը՝ մարդիկ իրենց կողմնորոշումներն ունեն, եւ երկրորդը՝ չեն վախենում, չեն խուսափում իրենց կողմնորոշումները բարձրաձայնել: Այն, ինչ խորհրդային տարիներին հնարաւոր չէր, այսօր հնարաւոր է», - յայտարարեց Պողոսեան:

«Սակայն հարցը միայն ազատօրէն մտքերն արտայայտելը չէ: Սովորաբար, մտքերի ազատ արտայայտումից յետոյ, մարդիկ սկսում են գործել», - շարունակեց մասնագէտը. «Արտայայտուելուց բացի մենք տեսնում են որոշակի ձեւաւորուած ինչ-որ հոսանքներ: Ես չէի ասի, որ սրանք քաղաքական հոսանքներ են կամ ուղղորդող հոսանքներ են, բայց բոլոր դէպքերում դա քաղաքացիական ըմբոստութեան, անհամաձայնութեան,

Ֆրանսայի Հայերը Ստորագրահաւաք Սկսած Են` Բողոքարկելու համար Պերիսից հարցով Եւրոպական Դատարանի Որոշումը

Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդը ստորագրահաւաք սկսած է, որպէսզի կոչ ընէ Զուլիցերիային՝ բողոքարկել Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանի կայացուցած որոշումը՝ Տողու Պերիսիցի հարցով:

Վերջերս Եւրոպական Դատարանը բաւարարած էր հակահայ թուրք գործիչ Տողու Պերիսիցի հայցը ըննդէմ Զուլիցերիոյ՝ խօսքի ազատութեան սկզբունքով:

Թուրքիոյ Աշխատաւորական կուսակցութեան նախագահ Տողու Պերիսից 2008-ին Զուլիցերիոյ մէջ դատապարտուած էր Հայոց ցեղաս-

պանութեան հրապարակային ժխտման համար: Անոր կողմէ ստեղծուած «Թալեաթ փաշա» կազմակերպութիւնը կը պայքարի Եւրոպայի մէջ Հայոց ցեղասպանութեան ճանաչման դէմ:

Տողու Պերիսիցի այժմ բանտարկուած է թուրքիոյ մէջ, չեղաշրջում կազմակերպելու մեղադրանքով: Սակայն, թրքական կառավարութիւնը պաշտպանած էր Պերիսիցին, յոյս չայտնելով, որ Դատարանի որոշումը նախադէպ կը ծառայէ եւ ետ կը մղէ այն երկրները, որոնք կ'ուզեն քրէականացնել 1915-ի Օսմանեան Թուրքիոյ մէջ Հայոց ցեղասպանութեան ժխտումը:

Շաբ.ը էջ 4

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ռուսաստանը Յեռանում է Հայաստանից

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՑԵԱՆ

2013 թվականին Հայաստանի քաղաքական իրավիճակը յանգեցրեց երկրի ինքնիշխանութեան յանձնմանը: Հայաստանում վերջին տասնամեակում ձեռնարկված քրէա-օլիգարխիկ բնույթի համակարգի գործունեությունն տրամաբանությունն այլ ելք չէր էլ ենթադրում: Այդ համակարգը, ուղղորդված էր մտնելով երկրի ողջ ռեսուրսը, ի վերջոյ սեփական դիրքերը պահպանելու համար պետք է դիմէր արտաքին հովանաւորի օգնությանը: Նման հովանաւոր գտնուեց ի դէմս Մոսկովայի եւ Փոլիտիկոսի:

Դեկտեմբերի 2-ին Սերժ Սարգսեանը եւ Փոլիտիկոս ստորագրեցին Հայաստանի ինքնիշխանութեան «յանձնման-ընդունման» ակտերը, իսկ Դեկտեմբերի 23-ին Հայաստանի խորհրդարանը «վաւերացրեց» դրանք օրէնքի կոպիտ խախտումներով:

Ինչպէս ասում են՝ չկայ չարիք, առանց բարիքի: Այս խայտառակ իրադարձություններից յետոյ Հայաստանի հանրութիւնը հնարաւորութիւն է ստացել ձեռք բերելու կեղծ պատկերացումներից ու յստակ պատկերացնել իր ինդիւստրիան ու անելիքները: Այդ հնարաւորութիւնը տրուեց է ծանր գնով, սակայն համակարգի ջանքերով՝ ապակողմնորոշուած, հաւատը կորցրած հանրութեան դէպքում այլ կերպ չէր էլ կարող լինել:

Ներկայում ինդիւստրիան առաւել քան յստակ է, եւ կայ նաեւ գաղափարախօսութիւնը՝ պայքար Հայաստանի ինքնիշխանութեան համար: Այս պայքարը ենթադրում է իրավիճակի կարուկ փոփոխութիւն Հայաստանում, երբ հանրութիւնը պետք է ստանձնի իր գլխաւոր պարտականութիւնը՝ իշխանութեան ձեռնարկման սահմանադրական մեխանիզմների արմատաւորումը:

Հանրութիւնը համոզուեց, որ այդ ճանապարհին գլխաւոր խոչընդոտը քրէա-օլիգարխիկ բնույթի համակարգն է՝ իր իշխանական, ընդդիմադիր ու այլընտրանքային սեգմենտներով: Այս համակարգն իր դիրքերը պահպանելու համար ձեռնարկել էր բաւական պարզունակ սխեմա՝ իշխանութիւնն ապահովում էր համակարգի գործունեութեան անխափանութիւնը, իսկ «համակարգային ընդդիմութեան» ինդիւստրիան պետք է լինէր հանրութեան պահանջների ու իրա-

տունքների չեզոքացումը: Բացի այդ, «համակարգային ընդդիմութիւնն» իր քարոզչամիջոցներով բոլոր նրանց, ովքեր դուրս են այս սխեմայից, պետք է հուշակեր Բաղրամեան 26-ի պատուէր կատարողներ, կամ ամէն ինչ վերագրէր Բաղրամեան 26-ին (այս մասին դեռ առիթ կը լինի խօսելու):

Սակայն, այս սխեման որեւէ յաջողութիւն չարձանագրեց, իսկ հայ-ռուսական ակտերից յետոյ լիովին խափանուեց: Հանրութիւնը խորհրդարանի մօտից քչեց «համակարգային ընդդիմութեան» ներկայացուցիչներին, չարտարաւելով, որ նրանք միայն խանգարում են ու մեղցնում բոլոր ինդիւստրիաները: Այս կուսակցութիւններից ոչ մէկն այդպէս էլ դէմ չգնաց Հայաստանի ինքնիշխանութեան յանձնմանը:

Հանրութիւնը հնարաւորութիւն է ստացել վերաիմաստաւորել ներքաղաքական պայքարի իմաստն ու բովանդակութիւնը եւ դուրս գալ համակարգի պարտադրած կաղապարներից: Ինքնիշխանութեան ինդիւստրիան մէջ ահռելի քաղաքական պոտենցիալ է պարունակում, եւ այն արդէն հնարաւոր է շեղել մինչ այժմ ընդունուած «ներքաղաքական պայքար» կոչուող իմիտացիայի տիպի հնարքներով:

Հայաստանում 2014 թվականին սպասում են կարեւոր ու ինչ որ առումով ճակատագրական իրադարձություններ: Ռուսաստանը Հայաստանի հանդէպ իր կոպիտ քայլերով ու միջամտութիւններով հայերի միջոց ակամայ հանել է ստրկամտութիւնն ու կեղծ պատկերացումները: Հայաստանում նրա ձեռնարկած քրէա-օլիգարխիկ համակարգը ճաքեր է տալիս, սակայն Մոսկովայի Հայաստանում այլ գործընկերներ չունի: Սպառուել են քաղաքական, տնտեսական, քարոզչական բնույթի բոլոր փաստարկներն ու հիմնաւորումները: Ըստ ներթեւեմի, ձեռնարկելով Հայաստանի գաղութացման գործընթացը, Ռուսաստանը կորցրել է այն:

Կը կարողանա՞յ արդեօք հանրութիւնն օգտուել ներկայիս բացառիկ հնարաւորութիւնից եւ ձեռնարկել նոր որակի ու բնույթի քաղաքական կառուցներ: Հայաստանի ապագայ իշխանութիւնը պետք է պատկանի Հայաստանի ինքնիշխան քաղաքացիներին:

Մնացել է ընդամենը երկու տարի:

«ԼՐԱԳԻՐ»

Ինչ-որ Բան Խանգարո՞ւմ է Քոչարեան-Տէր-Պետրոսեան Միաւորմանը

ՄԵՆԱՔՍԵԱ ՇԱԼՈՒՆԵՑ

Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօներին մէկ օր առաջ Ռոբերտ Քոչարեանի հարցազրոյցի ի յայտ գալը, իհարկէ, անսպասելի ամանորեայ «նուէր» էր հայ հասարակութեանն ու քաղաքական դաշտին: Դեռ ոչինչ, որ Քոչարեանն իր հարցազրոյցով ցոյց տուեց «վարչապետական» աթոռի նկատմամբ յաւակնութիւններն ու սկսեց ընդամենը «չինարարական ծաւալների անկման պատճառների» մասին պարզաբանումներից:

Դեռ լաւ է, որ նա չէր Հայաստանից «բնակչութեան մասսայական ելքի» թուերը, որպէսզի «չփճացնի բոլորի տօնական տրամադրութիւնը», բայց փոխարէնը չինայեց ու ասաց՝ «Մեր քաղաքացիների տրամադրութիւնը: Ապատիան, անելանելիութեան զգացումը, երկրի հեռանկարի նկատմամբ հաւատի բացակայութիւնը այն աստիճանի են հասել, որ դառնում են մարդկանց վարքագծի եւ մոտիվացիայի վրայ ազդող կայուն գործօն: Հետագոտութիւնները ցոյց են տալիս, որ Հայաստանում մնացած բնակչութեան ուղիղ 40 տոկոսը մտադիր է ընդմիջտ տեղափոխուել այլ երկիր առաջին իսկ հնարաւորութեան դէպքում: Հեռանալուն հակուած մարդը երբեք անշարժ գոյք ձեռք չի բերում այն երկրում կամ քաղաքում, որն ուզում է լքել: Նոյնը վերաբերում է նաեւ նոր բիզնես ձեռնարկելուն»:

«Բնակչանութեան դեգրադացիայի» եւ «բարոյական դեգրադացիայի» մասին ահագանգող, «թերարժէք վարչապետը անթոյլատրելի ձոխութիւն է»՝ ազդարարող Քոչարեանը Քոչարեան չէր լինի, եթէ չի իշխել իր աւանդական «բառապաշարի» ողջ հարստութիւնը՝ «Հաւանաբար շուտով կը սկսեն վնաստալ հաստիքային եւ արտահաստիքային մոսկանները...»:

Բայց Ռոբերտ Քոչարեանին էլ կարելի է հասկանալ... Նա մէկ տարուց աւելի սպասում էր, որ Սերժ Սարգսեանը կը ստորագրէ ՅՄ Ասոցացման համաձայնագիրը եւ Մաքսային միութեանը «դաւաճանած» Սերժ Սարգսեանին

գիտական ղեկավարն է եւ պատրաստ է իր կրճքով քեզ պաշտպանել՝ անգամ սեփական հեղինակութիւնը կորցնելու գնով: Եթէ մի ամբողջ ուսանողական բանակ են հանել, որ ոչ մի լրագրողի դաւաճան ականջ չյայտնուի դահլիճում եւ հանրութեանը չփոխանցի այդ գիտական աշխատութեան «հմայքները» եւ նորաթուխ գիտնականի ասել-խօսելու նրբերանգները: Եթէ երկրի դեկավարութիւնը չի ասում, Տարօն ջան, սիրուն չի, եւ հեջ պարտադիր չի, որ դու գիտութիւնների թեկնածու լինես, մանաւանդ առանց այդ կոչման էլ քեզ գնահատել ենք ու ամենաբարձր պաշտօնը վստահել: Եթէ տնտեսագիտութեան մասնագիտական յանձնաժողովը՝ Սուվարեանի գլխաւորութեամբ, պատրաստ է հաստատել թեկնածուականը՝ անկախ արժանիքից:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

Մոսկովայի գահընկեց կ'անի: Բայց... Չստացուեց:

Հիմա ո՞ւմ վրայ «յարձակուի» Քոչարեանը, եթէ ոչ վարչապետի...

Այս ամէնի մէջ, սակայն, ամենահետաքրքրականը այլ բան է: Ըստ էութեան, ՀԱԿ-ը, որն ամիսներ ու տարիներ շարունակ փորձում էր ապացուցել, թէ Ռոբերտ Քոչարեանի «քարտը մարուած» է եւ նա հեռացել է քաղաքական դաշտից, այժմ կանգնելու է ծանր, իսկ գուցէ, ոչ այնքան ծանր ընտրութեան առջեւ:

Հիմա ո՞ւմ համար պարզ չէ, որ հենց Ռոբերտ Քոչարեանն է սպասում Հայաստանում ընդդիմութեանն առաջնորդելու իր դերին: Հիմա ո՞ւմ համար պարզ չէ, որ ԲՀԿ-ի կնքահայր Ռոբերտ Քոչարեանը շարունակում է մնալ ԲՀԿ-ի եւ Գաղիկ Ծառուկեանի կնքահայրը, եւ ԲՀԿ-ն ոչ միայն Սերժ Սարգսեանին ընդդիմութիւն չի կարող դառնալ, այլեւ ԲՀԿ-ն կարող է գոյատեւել բացառապէս Ռոբերտ Քոչարեանի շունչը թիկունքում զգալով:

Այսինքն, Քոչարեանի «կոռուով» ԲՀԿ-ի ֆոնի ապահովմամբ, դեռ այլ հարցեր են լուծուելու Հայաստանի քաղաքական դաշտում:

Կ'ուզենա՞յ այդ «սուրբ գործին» լծուել նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ արդէն իր «բանականութեան դեգրադացիայի» եւ «բարոյական դեգրադացիայի» մասին եզրայանգումների առիթ կը տայ:

Ինչ-որ բան խանգարո՞ւմ է Քոչարեան-Տէր-Պետրոսեան միաւորմանը...

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԾԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Իսկ Ինչո՞ւ Ոչ

Մեր իշխանաւորները «Ոսկէ ձկնիկի» պառոււին են յիշեցնում՝ էս պաշտօնն ունենամ, էսքան ունեցուածք դիզեմ, էս գիտական կոչումն էլ ստանամ... Ի՞նչն է ստիպում երիտասարդ կարիերիստներին նորանոր «սահմանագծեր» յաղթահարել, նորանոր «ձեռքբերումներ» գրանցել: Երբ ժամանակին Տարօն Մարգարեանին թաղապետ էին սարքում, նրան ճանաչողները տարակուսում էին՝ Տարօնից ի՞նչ թաղապետ: Անցաւ ժամանակ, սկսեցին խօսել, որ Տարօն Մարգարեանը Երեւանի քաղաքապետի թեկնածու է:

Մարգարի կրկին գարմանում էին՝ հազիւ թաղապետի աթոռին է յարմարուել, նրանից ի՞նչ քաղաքապետ, այն էլ՝ Երեւանի: Բայց

պարզուեց՝ Անդրանիկ Մարգարեանի որդին ոչ թէ օրերով, այլ ժամերով է «աճում»՝ նրան իր նստած աթոռը նեղ է թւում, զբաղեցրած պաշտօնը՝ ցածր, գրաւած դիրքը՝ անբաւարար: Հիմա էլ, փաստօրէն, ուզում է գիտութեան մշակ լինել, որ իր կենսագրութեան մէջ մի փոքրիկ, բայց հաճելի տող աւելանայ՝ գիտութիւնների թեկնածու: Տնտեսագիտութեան թեկնածու Տարօն Մարգարեան՝ լաւ է հնչում:

Սոլիդ ու պատկառազդու: Իսկ ինչո՞ւ ոչ՝ եթէ մի պատկառելի բուհի ունկտոր անձամբ քո

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վ. Բալասանեանի դէմ մահափորձի կապակցութեամբ ԼՂՀ դատախազութեան աշխատանքը համարուում է ուղղորդուած

ԼՂՀ դատախազութեան Յունուարի 5-ի հաղորդումից կարելի է եզրակացնել, որ Վ. Բալասանեանի դէմ մահափորձի պատճառը միջանձնային վատ յարաբերութիւններն են, ինչը հիմնադրուել է, եւ այս հաղորդագրութեամբ դատախազութիւնը նպատակ ունի ուղղորդել հանրային կարծիքը, հնարաւոր է նաեւ՝ կասկածեալներին:



Լեւոնայիմ Ղարաբաղի Հանրապետութեան ԱԺ պատգամաւոր, Վիտալի Բալասանեան

Այս մասին ասուած է Արցախի «Ազգային վերածնունդ» կուսակցութեան գործադիր մարմնի տարածած յայտարարութեան մէջ:

«Սա խօսում է կամ նախաքննութեան ոչ պրոֆեսիոնալիզմի, կամ էլ միտումնաւորութեան մասին: Մենք հակուած ենք կարծելու, որ այդպիսով նպատակ կայ թաքցնել յանցագործութեան պատուիրատուին (ներին) եւ կասկած ենք յայտնում նախաքննութեան անաչառութեան նկատմամբ»,- ասուած է ԱՎԿ գործադիր մարմնի յայտարարութեան մէջ:

Յիշեցնենք, որ հաղորդուել էր, որ ԼԼԵՆԱյիմ Ղարաբաղի Հանրապետութեան ԱԺ պատգամաւոր, Արցախի հերոս, գեներալ Վիտալի Բալասանեանին դիտաւորութեամբ, շատերի կեանքի համար վտանգաւոր եղանակով կեանքից զրկելու նպատակով, անյայտ անձն ապօրինաբար պահուող 600 գրամ տրոտիլային էկզիպլիվալենտով պատրաստուած ինքնաշէն պայթուցիկ սարք էր տեղադրել վերջինիս անձնական օգտագործման «Նիսան Պատֆայնդեր» 45 SL 045 պետհամարանիշի ատոմոբեկային վրայ, սակայն յանցագործութիւնն աւարտին չէր հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով:

Փաստի առթիւ ԼՂՀ ոստիկանութեան քննչական վարչութիւնը

նուժ յարուցուել է քրէական գործ՝ ԼՂՀ քր. օր-ի 33/103 յօդուածի 2-րդ մասի 6-րդ կէտով (Շատերի կեանքի համար վտանգաւոր եղանակով սպանութեան փորձ) եւ ԼՂՀ քր. օր-ի 245-րդ յօդուածի 1-ին մասով (Ապօրինի կերպով գէնք, զինամթերք, պայթուցիկ նիւթեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը):

Յունուարի 5-ին ԼՂՀ դատախազութիւնը հաղորդեց, որ Բալասանեանի հանդէպ մահափորձ կատարելու փաստով ի յայտ են բերուել գործով կասկածեալներ՝ նշելով անուններ: Ըստ դատախազութեան՝ կասկածեալները շարունակական վիճաբանութիւնների եւ անբարեացակամ յարաբերութիւնների մէջ են գտնուել Բալասանեանի հետ՝ վերջինիս կողմից նրանցից մէկի եղբորը ազատագրկման ձեւով պատժի հետագայ կրումից ազատելու խոստումը չկատարելու պատճառով:

Ռուբէն Յակոբեան. Հայաստանի Քաղաքական Կեանքում Գաղափարական Քաղց է Տիրում

Հայաստանում ընդդիմութեան համար իրաւական տեսանկիւնից բարենպաստ պայմաններ չկան, NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասել է «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Ռուբէն Յակոբեանը:

Ըստ նրա՝ եթէ հաշուի առնենք այն, թէ որքան միջոցներ է խորհրդարանը յատկացնում, օրինակ, խորհրդարանական ընդդիմութեանը, ապա դա բաւական չէ անգամ մէկ գրասենեակի կարիքները նորմալ հոգալու համար: Գործնականում, իրական ընդդիմութիւնը ֆինանսական հնարաւորութիւններ չունի եւ այս առումով ծանր վիճակում է: «Այդ պատճառով այսօրուայ դրութեամբ մէկ անձի կուսակցութիւններ են ստեղծուել, քանի որ հիմնականում որոշակի անձինք կուսակցութիւն ստեղծելու հնարաւորութիւն ունեն: Սակայն կուսակցութիւնների՝ այս կամ այն գաղափարական հիմքի վրայ ստեղծուած լինելու մասին խօսելն աւելորդ է», - ասել է Յակոբեանը:

Նա նաեւ յաւելել է, որ երկրում ստեղծուել է այնպիսի իրավիճակ, որ ընդդիմութիւնը ենթարկուել օրէնքներին, այնինչ իշխանութիւնները նոյն օրէնքով չեն խաղում, «օրէնքից դուրս» են գտնուում. «Երկրի քաղաքական կեանքում գաղափարական քաղց է

տիրում: Եթէ փորձենք հասկանալ՝ ով որ քաղաքական ճամբարում է եւ գաղափարական ինչ նկատառումներից ելնելով, ապա գլուխ հանելը շատ դժուար կը լինի»:


Յակոբեանը նաեւ նշել է, որ վերջին ամիսներին խորհրդարանական ընդդիմութիւնը փորձում է համագործակցութեան եզրեր գտնել, քանի որ ակնյայտ է, որ առանձին վերցրած ոչ իշխանութիւնը, ոչ ընդդիմութիւնը չեն կարողանայ երկիրը դուրս բերել ստեղծուած իրավիճակից. «Ընդդիմութիւնը պէտք է հասկանայ, որ գործող իշխանութեան դէմ պայքարի համար պէտք է համախմբուել: Սակայն դժուար է ասել, թէ որքան կը ձգուի խորհրդարանական ընդդիմադիր ուժերի համախմբումը եւ այն, թէ կը պահպանուի արդեօք այն ամենասկզբունքային հարցերում»:

Պատգամաւորի կարծիքով՝ մարտահրաւէրները, որոնք ծառայած են երկրի առաջ, վերջին 5-6 տարում չեն ծագել: Օրինակ, ըստ նրա, ընտրութիւնների արդիւնքների կեղծումը սկսուել է 20 տարի առաջ եւ շարունակուել յաջորդող իշխանութիւնների օրօք:

«Իշխանութիւնը պէտք է գիտակցի, որ երկրում իրադրութիւնը վատթարանում է, եւ ինքը միայնակ ի վիճակի չէ դիմակայել դրան: Իշխանութիւնը պէտք է

Նախագահի Ամանորեայ Ուղերձը «Հաւատարմութեան Ցուցադրութիւն Ե Պուտինին»

Ընդդիմադիր պատգամաւոր, ՀՀԾ վարչութեան նախագահ, Հայաստանի նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արզումանեանի կարծիքով, նախագահ Սերժ Սարգսեանն իր ամանորեայ ուղերձը լղել է ոչ թէ հայ ժողովրդին, այլ Կրեմլին, եւ նպատակը հաւատարմութեան ցուցադրութիւնն է Պուտինին:



Ընդդիմադիր պատգամաւոր Ալեքսանդր Արզումանեան

«Ազատութեան» հետ զրոյցում Արզումանեանն ասաց, թէ ուղերձի հենց առաջին պարբերութիւնում Մաքսային Միութեան յիշատակումը վկայում է, որ հայ-ուսական յարաբերութիւնները խորը ճգնաժամի մէջ են, ու Պուտինի վարչակազմը չի վստահում Հայաստանի ներկայիս իշխանութիւններին:

«Փորձ է արւում բոլոր նման առիթները օգտագործել՝ Ռուսաստանին ցոյց տալու համար Հայաստանի իշխանութիւնների նուիրուածութիւնը, պատրաստակամութիւնն է՛լ աւելի խորացնել յարաբերութիւնները: Վստահութեան պակասի վերականգնման փորձեր են սրանք: Եւ սա խօսում է այն մասին, որ վերջին մի քանի տարիներին, երբ Եւրամիութեան հետ բանակցութիւններ էին ընթանում, Ռուսաստանի հետ յարաբերութիւններում լուրջ ճգնաժամ էր առաջացել, եւ վստահութեան պակաս կայ», - նշեց նախկին արտգործնախարարը՝ շարունակելով. - «Սա եւս մէկ ապացոյցն է այն բանի, որ անցած տարուայ Սեպտեմբերի 3-ին Հայաստանին պարտադրուեց Մաքսային Միութեանը միանալու մասին որոշումը եւ աւելին՝ այժմ հայաստանեան իշխանութիւններին պարտադրում են ամէն անգամ վերահաստատել

իրենց նուիրուածութիւնը Մոսկուային»:

Նախագահ Սարգսեանի ամանորեայ ուղերձի հենց առաջին պարբերութիւնում կարդում ենք՝ «Մենք աւելի սերտացրինք Հայաստանի տնտեսական, քաղաքական ու ռազմական համագործակցութիւնը Ռուսաստանի Դաշնութեան հետ, իսկ գալիք տարի, վստահ եմ, կը դառնանք Մաքսային Միութեան լիիրաւ անդամ: Հայաստանը ստեղծում է նոր իրականութիւն, որտեղ լինելու է աւելի պաշտպանուած եւ աւելի մրցունակ»:

«Ինչպէս չարութիւն արած աշակերտը ձգտում է ինչ-որ բանով ուսուցչին դուր գալ... Սա արգասիքն է այն քաղաքականութեան, որ մենք վարել ենք վերջին տարիներին: Այսինքն՝ ամբողջութեամբ ստրկացման տանելուց յետոյ, հիմա մեզ հետ վարուում են որպէս ստրուկի հետ: Պարտադրում են մեզ», - նշեց ՀՀԾ վարչութեան նախագահը:

Շանթ Յարութիւնեանը Զի Դադարեցնում Հացադուլը

15-րդ օրը հացադուլի մէջ գտնուող «Յեղակոն» կուսակցութեան նախագահ Շանթ Յարութիւնեանն հանդիպելով իր փաստաբան Ինեսա Պետրոսեանին՝ յայտնել է, որ չի դադարեցնում հացադուլը, չնայած վատ ինքնազգացողութեանը:



«Յեղակոն» կուսակցութեան նախագահ Շանթ Յարութիւնեան

«Իրեն էլ որեւէ գրաւոր պատասխան չի տրուել, որ մերժում են տեսակցութիւնների արգելանքը հանելու իր պահանջը», - Tert.am-ի հետ զրոյցում յայտնեց Շանթ Յարութիւնեանի կինը՝ Ռուզան Բաղլեանը:

Յիշեցնենք, որ Յունուարի 6-ին՝ հացադուլ յայտարարելուց յետոյ առաջին անգամ Շանթ Յարութիւնեանին էր այցելել Հելսինկեան քաղաքացիական ասամբլեայի

Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը, ով էլ յայտնել էր, որ նա հիւժուած է, զարկերակային ճնշումը՝ ցածր:

Յիշեցնենք, որ Նոյեմբերի 5-ին Շանթ Յարութիւնեանը՝ մի խումբ կողմնակիցների հետ, մահակներով ու ձողերով գինուած, փորձել էր երթ կատարել Ազատութեան հրապարակից դէպի նախագահական նստավայր, ինչը, սակայն կանխուել էր:

գիտակցի, որ ընդդիմութեան հետ պէտք է կլոր սեղանի շուրջ նստել՝ առանց յետին մտքի, ամէն ինչ քննարկել եւ միասին ելք գտնել իրավիճակից:

Ընդ որում, խօսքը ընդդիմութեանը պաշտօններ տալու մասին չէ, քանի որ այդ դէպքում ամէն ինչ կը վերջանայ: Ընդդիմութեանը հարկաւոր է ստուգողական գործառնութիւնը տրամադրել, ինչի շնորհիւ իշխանութիւններին հակակշիռ կը ստեղծուի», - ամփոփել է Ռուբէն Յակոբեանը:

ԼՈՒՐԵՐ

Ռուս Փորձագետ. «Թուրքիայի Քաղաքականութիւնը Հայ-Թուրքական Հաշտեցման Գործընթացի Իրական Վերականգնման Զոյսեր Զի Ներշնչում

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի մօտենալուն գուգահեռ Երեւանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու Թուրքիայի քայլերը գնալով աւելի դեկորատիւ բնոյթ են կրելու, քանի իրական են լինելու: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտնել է ռուսաստանցի քաղաքագետ Միխայիլ Ալեքսանդրովը:

Ըստ նրա՝ Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դաւութօղլուն, յամենայն դէպս, խօսել է որոշ անակնկալների մասին, ինչ-որ պահեր եղել են նաեւ վարչապետ Ռեջեփ Թայիփի էրդողանի կողմից, սակայն հիմնականում, իհարկէ, միջազգային յարաբերութիւններում բոլոր գծերը վարում է Դաւութօղլուն՝ փորձելով ինչ-որ առումով «փափկեցնել»: ԵՄ-ին, հանգստացնել վերջինիս ու ցոյց տալ, որ գործընթացը չի դադարել, որ Անկարան աշխատում է Հայաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու ու Հայաստանի շրջափակման խնդիրը լուծելու ուղղութեամբ: «Սակայն առայժմ տեսնում ենք միայն բառեր, իսկապէս լաւ բառեր, խոստումնալից խօսքեր, սակայն ոչ աւելին ու ոչ մի էական քայլ: Գործնականում Թուրքիան շարժւում է մէկ ուղղութեամբ՝ պաշտպանելով ազրբեջանական դիրքորոշումը ու հիմնուելով խնդիրները հասկանալու ազրբեջանական ընկալման վրայ եւ ոչ մի կերպ չփորձելով հասկանալ հակամարտութեան էությունը, դրա

հետեւանքները, ոչ էլ այն ժողովուրդների իրաւունքները, որոնք չեն ցանկանում ապրել Ադրբեջանի իշխանութեան ներքոյ: Այնպէս որ, ընդհանուր առմամբ, ես այստեղ առանձնապէս քայլեր չեմ տեսնում:

Թուրքիայի կողմից հնարաւոր են ինչ-որ սահմանափակ միջոցներ, որոնք կարող են արտօնել ԱՄՆ-ն, Եւրամիութիւնը: Օրինակ՝ աւիահարթը կարող է ընդլայնուածը, հնարաւոր է ինչ-ինչ տեսակի տրանսպորտային միջոցներ երկրի տարածք թողնել: Սակայն մեղք կը լինի թաքցնելը, որ երբ նրանց էլեկտրաէներգիա է հարկաւոր, նրանք այն ձեռք են բերում՝ չնայած շրջափակման մասին բոլոր յայտարարութիւններին», -ասել է քաղաքագետը: Այսպիսով, փորձագետը կարծում է, որ Թուրքիան առայժմ լուրջ յոյսեր չի տուել, որ կը վերացնի Հայաստանի շրջափակումը ու իրապէս կը վերսկսի ցիւրիխեան գործընթացը: «Դրան, իհարկէ, խոչընդոտում է նաեւ Հայոց ցեղասպանութեան վերաբերելու Թուրքիայի դիրքորոշումը, իսկ այս հարցը եւս շարունակում է առկալի վիճակում մնալ», - եզրափակել է քաղաքագետը:

Յիշեցնենք, որ հայ-թուրքական արձանագրութիւնների վաւերացման գործընթացը դադարեցուցել է Անկարայի ապակառուցողական դիրքորոշման պատճառով, քանի որ վերջինս դարաբաղեան հարցի շուրջ նախապայմաններ է առաջադրել:

Ուժի Սէջ Է Ստել Վիզաների Տրամադրումը Դիւրացնելու Համաձայնագիրը

Հայաստանի քաղաքացիների համար ուժի մէջ է մտել վիզաների տրամադրումը դիւրացնելու մասին համաձայնագիրը Եւրամիութեան հետ:

2012-ի Դեկտեմբերին ստորագրուած եւ շուրջ մէկ տարի տարբեր գործընթացներ անցած համաձայնագիրը սահմանում է, որ Հայաստանի քաղաքացիները Շենգեն վիզայի համար այսուհետ 60 եւրոյի փոխարէն վճարելու են 35 եւրո: Հէջ քաղաքացիների որոշակի խմբեր էլ առհասարակ ազատուում են վիզայի վճարից:

Ըստ ԵՄ խորհրդի կայքի՝ այդ խմբին են պատկանում դպրոցականները, ուսանողները եւ նրանց ուղեկցող ուսուցիչները, ովքեր ճամբորդում են ուսման կամ կրթական փոխանակման ծրագրերի շրջանակներում, ԵՄ-ում օրինական կերպով բնակուող մերձաւոր ազգականները, թոշակաւուները, 12 տարեկանից ցածր տարիք ունեցող երեխաները, պաշտօնական պատուիրակութիւնների անդամները եւ գործնական նպատակներով ճամբորդող ՀՀ Սահմանադրական եւ Վճռաբեկ դատարանների դատաւորները, լրագրողները եւ նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմը, միջազգային սպորտային միջոցաւումների մասնակիցները եւ նրանց ուղեկցող անձնակազմը, քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչները, ովքեր ճամբորդում են արտերկրում գործող հայկական հանրային շահ հետապնդող ոչ առեւտրային կազմակերպութիւնների հրահրով,

արուեստի եւ մշակութի բնագաւառներում փոխանակման ծրագրերի մասնակիցները, հաշմանդամութեան կարգ ունեցող անձինք եւ նրանց ուղեկցողները:

Երկարատեւ բազմակի մոտաւոր վիզաներ դիւրացուած պայմաններով կը տրամադրուեն նախկինում վիզա ստացած եւ առաջիկայում ճամբորդելու ապացոյցներ տրամադրող մարդկանց: Հայաստանի քաղաքացիները, ովքեր Եւրոպայում օրինական բնակուող մերձաւոր ազգականներ ունեն, կը կարողանան նաեւ առաւելագոյնը հինգ տարի վաւերականութեան ժամկէտով բազմակի մոտաւոր վիզա ստանալ:

Սա եւ վիզայի վճարի նուազեցումն են ըստ հոլթեան հիմնական փոփոխութիւնները, որ արդէն մի քանի օր է ուժի մէջ են մտել նոր համաձայնագրով: Մնացած բոլոր պայմանները մնացել են նոյնը՝ Հայաստանի քաղաքացիները պէտք է շարունակեն տրամադրել իրենց ճամբորդութեան իրաւական հիմնաւորումները՝ հրահրներն ու ճամբորդութեան մանրամասները:

Վիզային ռեժիմի դիւրացմանը գուգահեռ ուժի մէջ է մտնում ռեադմիսիայի կամ ետընդունման համաձայնագիրը, որով Հայաստանը պարտաւորուում է 3-օրեայ ժամկէտում ետ ընդունել արտերկրում ապօրինի բնակուող իր քաղաքացիներին, նրանց ընտանիքի անդամներին, երեխաներին, նոյնիսկ նրանց, ովքեր հրաժարուել են իրենց հայկական քաղաքացիութիւնից:

ԼՂՀ Երկրորդ Նախագահ. «Հայկական Ծագման» Օտարերկրեայ Կապիտալը Վաղուց Է Արցախ Եկել

Ղարաբաղեան հակամարտութեան չկարգաւորուած լինելը եւ ԼՂՀ միջազգային ճանաչուած չլինելը գրկում են Արցախի Հանրապետութեանը հնարաւորութիւնները, որոնք ունեն ճանաչուած պետութիւնները: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նշել է ԼՂՀ երկրորդ նախագահ Արկաղի Ղուկասեանը, ով ներկայումս Հայաստանի յատուկ յանձնարարութիւնների դեսպանն է:

Նրա խօսքով՝ «հայկական ծագման» օտարերկրեայ կապիտալը վաղուց է Արցախ եկել: «Ինչ վերաբերում է օտարերկրեայ ոչ հայկական ներդրումներին, ապա դրանց ներգրաւումը ԼՂՀ տնտեսութեան մէջ բարդանում է մեր իրավիճակի իւրայատուկութիւններով պայմանաւորուած: Ղարաբաղեան հակամարտութեան չկարգաւորուած լինելը եւ ԼՂՀ միջազգային ճանաչուած չլինելը գրկում են Արցախի Հանրապետութեանը մի շարք հնարաւորութիւններից, որոնք ունեն ճանաչուած պետութիւնները», - նշել է նախկին նախագահը:



ԼՂՀ երկրորդ նախագահ Արկաղի Ղուկասեան

Արկաղի Ղուկասեանը այդ կապակցութեամբ վստահութիւն է յայտնել, որ ելքը ներդրումային համապատասխան միջավայրի ձեւաւորումն ու պահպանումն է, որը կարող է չէզոքացնել հնարաւոր ռիսկերը եւ ԼՂՀ-ում բիզնես ծաւալելու դարձնել գրաւիչ օտարերկրեայ ներդրողների համար:

Հայաստանի մէջ Պայթիւնավտանգ Իրավիճակ

Շարունակուած էջ 1-էն

դժգոհութեան եւ բողոքական զանգուածի գործողութիւններ են: Դրանք կարող են լինել երթեր, ցոյցեր, հացադուլ: Այսինքն հասարակութիւնը բաւականին ակտիվացել է, գտնում է ձեւեր իր դժգոհութիւնը արտայայտելու եւ այդ ձեւերը գնալով լրջանում են: Այս ամէնը ամփոփելով՝ ես եկայ այն եզրակացութեան, որ մենք 2014 թուականին պէտք է պատրաստ լինենք շատ լուրջ իրադարձութիւնների: Մենք ունենք վրայ ենք նստած եւ այդ ուղիքը ամէնրոպէ կարող է պայթել»:

Ըստ սոցիոլոգի, զարգացած ժողովրդավարութիւններում մէջ հանրային դժգոհութիւնը արդիւնքը կա՛մ ընտրութիւններում միջոցով իշխանափոխութիւնն է, կա՛մ իշխանութիւններում կողմէ քառային լուրջ փոփոխութիւնները: Սակայն Հայաստանի մէջ երկու տարբերակն ալ չկան:

Նոր Ձերբակալութիւններ

Շարունակուած էջ 1-էն

ցաւ: Այժմ դատարանը կը փորձէ պարզել գլխաւոր հարցը՝ արդեօք Հրանդ Տինքի սպանութիւնը իրականացուած է կազմակերպուած յանցաւոր խմբաւորման կողմէ, որուն մէջ նաեւ պետական պաշտօնեաներ կան՝ ոստիկաններ, ապահովութեան ծառայութիւններու գործակալներ եւ աշխատակիցներ: Վերաբացուած գործով անցեալ տարի աշնան ձերբակալուած էր ոստիկանութեան նախկին գաղտնի գործակալ Էրհան Թունուել եւ այժմ, այս տարուայ Յունուար 7-ին եւս երկու կասկածեալ ձերբակալուեցան՝ Զեյնէլ Ապիտին Եւուզ եւ Օսման Հայալ:

Նոյն օրը տեղի ունեցաւ վերաբացուած գործով դատական հերթական նիստը: «Տինքի բարեկամներ» խումբի անդամները եւ իրաւապաշտպան ակտիւիստները մինչեւ լսումներու սկսիլը հաւաքուած էին դատարանի շէնքի մօտ՝ արդարադատութիւն պահանջող կարգախօսներով:

Թուրքիոյ մէջ յայտնի գրող Ահմետ Ումիթ ակտիւիստներու խումբի անունով ներկայացուց իրենց պահանջը: Ան շեշտեց, որ մինչեւ հիմա չեն հարցաքննուած Տինքի սպանութեան համար պատասխանատու պետական պաշտօնեաները, փոխարէնը՝ որոշ պաշտօնեաներ աւելի բարձր կոչումներ ստացած են:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՈՍԱԳԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

«Ես եմ՝ Բանապարհն եւ նշմարուփիւն եւ կեանք» (Յովհ. Ժ՛Դ 6):

Սիրելի հաւատաւոր ժողովուրդ ի Հայրենիս, Արցախ եւ ի Սփիւռս:

Քրիստոսի՝ մեր Տիրոջ Սուրբ Ծննդեան բերկրանքով այսօր մեր ցնծագին գոհաբանութիւնն ենք բարձրացնում առ Աստուած: Փառաբանում ենք մեր Փրկչին՝ Բեթղեհեմում ծնուած մանուկ Յիսուսին: Սուրբ Ծննդեան օրհնեալ օրը երկիրը երկիրք դարձաւ, եւ նրանում ծագեց Արդարութեան արեգակը՝ ճշմարտութեան լուսով լուսաւորելու համար մարդկային հոգիները, որպէսզի ճանաչեն, տեսնեն ու գտնեն իրենց փրկութիւնը:



Աստուծոյ Որդին խոնարհուեց երկնային բարձունքներից, մարդացաւ ու աշխարհ եկաւ՝ բանասարկուի խաբէութեամբ դրախտից վտարուած մարդուն ազատելու մեղքից եւ մեղք սերմանող սատանայի իշխանութիւնից: Եկաւ, պատուիրանագանցութեամբ Աստուծոյ դէմ ելած նախաստեղծ մարդու կորուսեալ սերունդներին վերստին երկնքի արքայութիւն վերադարձնելու եւ Աստուծոյ որդեգիրները դարձնելու: «Յո՛ց տուր ինձ ճանապարհն այն, որով պիտի գնամ, քանզի դէպի քեզ, Տէ՛ր, բարձրացրի հոգիս» (Սաղմ. ճԽԲ 8), ի պատասխան մարդկութեան այս աղերսի, որ սաղմոսերգուի շուրթերով երկիրք էր բարձրանում՝ հնչեց մեր Փրկչի ձայնը. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը»:

Ճշմարտութիւնը եւ կեանքը իր անձի հետ նոյնացնելով՝ մեր Տէրը ճշմարտութիւնը հաւասար արժէք հռչակեց կեանքին: Նա ճշմարտութեան ճառագայթներով ցրեց մարդկային մոլորութիւնների ու մեղսագործութիւնների խաւարը եւ պարգեւեց մարդկանց ճշմարտութեան Սուրբ Հոգին (Յովհ. Ժ՛Դ 17), որպէսզի մարդկութեան ընթացքը հաստատուի խաղաղութեան ու արդարութեան, միմեանց հանդէպ սիրոյ եւ ազնուութեան վրայ՝ հիմնուած կեանքի մէջ:

Տիրոջ փրկագործութեամբ պարտութիւն կրած չարն այսօր էլ մոլեգնութեամբ պատերազմում է մարդկային հոգիների համար, փորձելով մշուշով պատել Քրիստոսի բերած ճշմարտութեան լույսը, որպէսզի մարդիկ չտեսնեն դէպի երկիրք տանող ճանապարհը եւ խաբէութեան որոգայթներում մոլորուելով՝ գրկուեն երկնային արքայութեան յաւիտենական կեանքից: Չարը դադար չունի, գործում է օրնիբուն եւ գործում է մարդկանց միջոցով: Չարը ճանապարհ է հարթում, երբ կեանքում պակասում է նախանձախնդրութիւնը ճշմարտութեան հանդէպ, եւ սուտը գտնում է իր համակիրներին: Չարի խաբէպատիր ընթացքները գործնում են, երբ մարդը հեռանում է Քրիստոսի ուսուցանած սկզբունքներից՝ կեանքը լցնելով կեղծիքներով ու խեղաթիւրումներով: Այսպէս է, որ իրողութիւնների ներկայացումը ձեւափոխուած է բանասարկութեան եւ անձիշտ գնահատականների, կրօնի ընկալման մէջ կամայական ու շահախնդիր մեկնաբանութիւնները ծնունդ են տալիս աղանդների, մարդու իրաւունքի պաշտպանութեան պահանջով

պարտադրում են երբեմն նաեւ հասարակութեան մտածելակերպին ու արժեհամակարգին անյարիր բարքեր: Այսպէս է, որ աշխարհում բարոյականութիւնը տեղի է տալիս ապաբարոյականութեան առջեւ, խօսքի ազատութիւնը վերածուած է խօսքի սանձարձակութեան, վկայութիւնը՝ ճշմարտութեան խեղդումի: Ճշմարտութիւնը նենգափոխելով քաղաքական շահերը յաճախ հակադրում են արդարութեանն ու խաղաղութեանը, նիւթականի մոլորեցքը, եսակենտրոն ձգտումները՝ գթութեանն ու մարդասիրութեանը՝ աշխարհում բազմացնելով հակամարտութիւնները, վիշտը, կարիքն ու նեղութիւնները:

Կեանքն այնկոծող այսպիսի իրողութիւններից աշխարհը կձերբազատուի, երբ մարդիկ ընդունեն Քրիստոսի ճշմարտութիւնը, երբ իրենց հաւատաւոր գործերով վկայեն Տիրոջ ներկայութիւնը եւ առաքելալի պէս բարձրաձայնեն. «Իմ մէջ կայ Քրիստոսի ճշմարտութիւնը» (Բ Կորնթ. ԺԱ 10): Ճշմարտութիւնը կրելով միայն մարդկութիւնը կարող է ապահովել կեանքի առաջընթաց, բարեփոխում, բարի արդիւնք ու զարգացում, քանզի ոչինչ մնայուն չի կառուցուած խաբէութեան վրայ, ոչ մարդկային յարաբերութիւններ, ոչ բարուոք հասարակական կեանք ու պետականութիւն: Երբ ճշմարտութիւնը մարդկանց մէջ է, արժեքուրկ են նուիրում, արդարութիւն, եղբայրսիրութիւն, բաց ճշմարտութեամբ առնում են գօրութիւն եւ գործի վերածուելու ուժակնութիւն:

Մեր իրականութեան մէջ, սիրելի բարեպաշտ ժողովուրդ, նոյնպէս, ցաւօք, տեղ են գտնում վատաբանութիւնն ու բանասարկութիւնը, անտարբերութիւնը երկրի ընդհանուր բարիքի նկատմամբ: Նահանջ են ապրում ընտանեկան աւանդական արժէքները, դժուարութիւնների առջեւ՝ յանձնառութեան ոգին: Պատասխանատուութիւնը ստորադասում է իրաւունքին, անզուսպ պահուածքն ու վիրաւորանքը ընկալում է որպէս քաջութիւն: Սեփական կարծիքն արտայայտելու իրաւունքը յաճախ ի չարս է գործադրում ճշմարտութիւնն աղաւղելու, կողմնակալ տեսակէտներ տարածելու համար: Այսպիսի մտայնութեան մէջ սուտը քողարկում է ճշմարտութեան դիմակով, բանավէճը դառնում է վիճաբանութիւն, քննարկումը վերածուած քամահարանքի ու դատապարտութեան խօսքի, որոնցից հեռանում է Աստուծոյ ճշմարտութեան Հոգին, Աստուծոյ իմաստութիւնը, եւ մենք դժուարանում ենք, այո, նոյնիսկ դադարում ենք տեսնել բարին, արդարը, ու մեր կեանքում տկարանում են միմեանց հանդէպ հաւատն ու վստահութիւնը եւ գալիքի յոյան ու լաւատեսութիւնը:

Բեթղեհեմում ծնուած Մանուկն է, սիրելի հաւատաւոր ժողովուրդ, ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը: Նրան պիտի ապաւինենք, մեր սրտերում Նրա ճշմարտութիւնը կրենք, որ վերափոխուի մեր կեանքը, լցուի աներկիւղ վստահութեամբ, դժուարութիւնները յաղթահարելու եւ ամեն բան Աստուծոյ բարերար կամքով ուղղելու գործութեամբ: Ճշմարտութիւնն ազատարար է: «Եւ կը ճանաչէք ճշմարտութիւնը, եւ ճշմարտութիւնը կ'ազատի ձեզ» (Յովհ. Ը 32),- ասում է մեր Տէրը: Ապրենք ու գործենք Քրիստոսի ճշմարտութեամբ, Նրա խօսքն ու պատգամները դարձնենք մեր կեանքի խաւարացիր լույսը, մեր հանդէպ Նրա սէրն ու ողորմութիւնը՝ մեզ միաւորող ուժը, ազգի միասնութիւնը կերտող գործութիւնը: Անխախտ ու ամուր պահենք մեր միաբանութիւնը, համերաշխութեան ոգին, ինչպէս տանենք եւ հոգանք միմեանց համար, մեր երկրի, հոգեւոր եւ ազգային մեր կեանքի վերելքի համար: Միայն այսպէս, միմիայն այսպէս պիտի կերտենք շէն ու բարօր մեր Հայրենիքը: Միայն այսպէս կարող պիտի լինենք Հայոց Յեղասպանութեան 100-ամեակ տարելիցը դարձնել մեր արդար դատի յաղթանակի հանգրուան եւ բարուոք, արդար լուծման առաջնորդել արցախեան հիմնախնդիրը: Այսպէս կենսունակ պիտի պահենք Սփիւռքը, յոյս ու ապաւին դառնանք եւ նեցուկ լինենք հակամարտութեան դժուարութիւնները կրող սիրիահայ մեր եղբայրներին ու քոյրերին: Եւ թող մեր բոլոր գործերը Տիրոջով լինեն:

Այս մաղթանքով, Սուրբ Ծննդեան աւետիսով Մեր ողջոյնն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ

Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին, Հայ Եկեղեցու ուխտապահ ու նուիրեալ ողջ հոգեւոր դասին, մեր քոյր Եկեղեցիների շնորհագարդ հոգեւոր Պետերին:

Հայրապետական օրհնութեամբ եւ Սուրբ Ծննդեան շնորհների հայցով ողջունում ենք Սուրբ Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ տիար Սերժ Սարգսեանին եւ առաջին տիկնջը: Մեր ողջոյնն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ տիար Բակո Սահակեանին, Հայոց պետական աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին, միջազգային կազմակերպութիւնների ներկայացուցիչներին:

Աստուածակառօց Սուրբ Էջմիածնից, մեր Տիրոջ եւ Փրկչի Իջման Սուրբ Սեղանից Սուրբ Ծննդեան աւետիսով Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում ի սփիւռս աշխարհի հաւատաւոր համայն մեր ժողովրդին:

Այս բերկրալի օրը հայցենք, որ Փրկչի Ծննդեան շնորհները մշտապիւր լինեն աշխարհում, եւ մարգարէի մաղթանքով՝ ճշմարտութիւնը եւ ողորմութիւնը հանդիպեն, արդարութիւնն ու խաղաղութիւնը համբուրուեն (Սաղմ. 2Դ 11):

Թող մեր Տէր Յիսուս Քրիստոսի Ծննդեան լուսաբերող շողորմ պայծառացնեն մեր Սուրբ Եկեղեցին, մեր Մայր Հայրենիքը, աշխարհասփիւռ հայ կեանքը, որ այն լինի փառաբանութիւն Բարձրեալն Աստուծոյ եւ պարգեւի ազգիս մշտապէս հոգեւոր անհուն ուրախութիւն, եւ մենք այսօր եւ միշտ խնդութեամբ աւետենք:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս:

Ս. Պատարագից յետոյ վեհափառ Հայրապետի հանդիսապետութեամբ կատարուեց Ջրօրհնէքի արարողութիւնը: Մայր Տաճարում Ջրօրհնէքի խաչի կնքահայրն էր Հայ Եկեղեցու մոսկուաբնակ բարերար Հայկ Մաղաքեւեանը:

Ս. Պատարագի արարողութեանը ներկայ էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեանը եւ կառավարութեան անդամներ, Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամներ, պետական բարձրաստիճան պաշտօնեաներ, Հայաստանում հաւատարմագրուած օտարերկրեայ դիւանագէտներ, կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի ներկայացուցիչներ:

Ս. Պատարագից յետոյ Ալէք եւ Մարի Մանուկեան Գանձատան սրահում տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն, որի ընթացքում Նորին Սրբութիւնը վերստին իր օրհնութիւնն ու բարեմաղթանքները փոխանցեց ներկաներին Ս. Ծննդեան եւ Աստուածայանութեան տօնի առիթով:

ՕՁԻ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԻՈՒ ՅԱՍԱՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԼԻՆԵԼ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Շատ հակասական տարի ապրեցինք՝ եթէ չիշենք նախագահական ընտրությունները, այնտեղ հնչած այժմ արդէն գործող նախագահի խոստումները, որոնց բոլորի ուղղվածությունն ու բովանդակությունը կարելի է Սեպտեմբերի 3-ից յետոյ փոխուած համարել (այսինքն՝ ձայն տրուել է այլ տեսակի խոստումներին, հիմա այլ բան է իրականացում), Բաֆֆու «յեղափոխությունը», աստիճանի համաձայնագրից կտրուկ շրջադարձը՝ Սեպտեմբերի 3-ով, վերջին՝ գազային համաձայնագրերը: Կարելի էր մտածել, թէ մեր քաղաքական դաշտի անարդիւնաւէտ պահուածքը հանդէպ կատարուող տարուայ ընթացքում նրանից է, որ յաճախ մեզանից անկախ պատճառներով Հայաստանի կտրուկ շրջադարձերը այդպէս էլ մեր ծանրաքաշ ուժերին չեն թողնում արագ վերադասուելու ուժերն ու մտքերը: Գիտէ՞ք յայտնի ասույթը՝ վազող մարզիկի յաղթանակը նախ նրա գիտակցությունից, յետոյ միայն՝ վազքի արագությունից է կախուած: Մերոնք չեն հասցնում փաստորէն մտքերն արագ հաւաքել եւ համոզուած գիտակցականութեամբ ուղղորդել իրենց գործողությունները:

Սեպտեմբերի 3-ին Մաքսային Միութեանն անդամակցելու Հայաստանի ցանկություն բարձրաձայնումից յետոյ Հայաստանում ամէն բան ոտնիգլուխ փոխուեց՝ խոստումները, տրամադրությունները, տեսակէտները եւ սկզբունքները:

Հայերս պիտի որ վաղուց աւարկայօրէն հասկացած լինէինք, որ հիմա բոլորն են ձգտում ճնշում բանեցնել փոքրիկ Հայաստանի վրայ միայն այն պատճառով, որ յայտնուել ենք նրանց շահերի հանգոյցներում ու նոր ապացոյցների պակաս էլ չկայ ճնշումների. Եւրոպան է ճնշում բանեցնում ԵՊ՝ ցեղասպանություններ ժխտելու վերաբերեալ վերջերս ընդունած որոշմամբ եւ մի շարք ֆինանսական խոստումների յետողորմեայով, Ռուսաստանի բազմաթիւ մկանացուցադրումներին հետեւեցին գազային համաձայնագրերը, ԱՄՆ-ը եւս առաջուայ նման չի շոյալուսում իր յատկացումները ու չի խորշում մեր հազար ու մի ներպետական հարցերի մասին կարծիք յայտնել՝ սկսած պետքարտուղարի, վերջացրած դեսպան Հե-

Ֆերնի մակարդակով:

Առհասարակ՝ մտորելու նիւթն այս տարի շատ էր՝ ժամանակը՝ քիչ, ոչ ոք չէր հասցնում մինչեւ վերջ կընել տեղի ունեցողը: Հենց միայն այն, որ «աստիճանի» բառը, որով ֆորմատ էր արել իր համաձայնագիրը Եւրոպան յետխորհրդային երկրներին պարտաւորություններ ուղղելիս, նշանակում է ոչ թէ ուղիղ, այլ առնչուող, այսինքն՝ կցորդուած յարաբերություններին, պիտի որ շատ բան ասէին: Կցորդուած յարաբերություններին եւրոպական հայեացքը տեղ էր թողնու՞մ այդ յարաբերություններին հասցէատէրերին՝ այլ ուղղութեամբ նայելու, թէկուզ այլ ուղղությունը նոյնքան բարդ է, որքան եւրոպական խառնափնթորությունը եւ նոյնքան վտանգաւոր, որքան եւրոպական ուղղութեան մէջ էին փնտռողները վտանգ գտնում: Բայց կայ ԱՄՆ-ը, որը բացայայտ կամ թաքնուած միշտ տարբեր թելեր ձգելով՝ փորձում է իրավիճակն իր շահին համապատասխան ձգել, ընդ որում՝ թելերը ձգում են մէկ յաջորդաբար, մէկ՝ առաջին հայեացքից անտրամաբանական, մէկ՝ Եւրոպային հասցէագրուած, մէկ՝ Ռուսաստանին ուղղուած գործողությունների տեսքով (Իրան, Ուկրաինա): Ու Հայաստանին բաժին է ընկել ամենադժուարինը՝ փոթորկոտ ծովում թիափարուող նաւակի, որը, որքան էլ դժուար է, պէտք է ձիշտ ուղղություն ընտրի՝ ինքնուրոյն որոշում կայացնելու համարձակութեան տեսքով: Նաւն առաջուայ նման փոթորկոտ ծովում է, որի համար հաւասարապէս վտանգաւոր են հիւսիսից ու հարաւից, արեւելքից ու արեւմուտքից փչող քամիները:

Յետոյ էլ ասում են՝ կենդանակերպի նշանները պայմանական բաներ են. հա, միգուցէ, բայց օձի տարում, իրօք, շատ խորամանկություն եւ օձային խելք դրսեւորուեց, որից իրապէս օգտուեցին բոլորը՝ գաղտնի գործընթացներ, երեսին ժպիտ, ու տակից սառը գործողություն: Միգուցէ Հայաստանի ղեկավարութեանը թուաց, թէ իրենք էլ դրսեւորեցին օձի իմաստնությունն ու գաղտնորէն մտմտալու սովորոյթը: Միայն թէ ազնիւ ու շիտակ ձին (2014-ը), որը օձութիւնը տանել չի կարողանում, սմբակով հիմնայատակ կարող է քանդել օձի հաշուարկները, զգայուն եւ յախուռն ձին շատ անգամ կարող է հիմնայատակ աւերել օձի

ՈՐՔԱՆ Է ՅԱՐՈՒՄՏՆԵՐԻ ԵՒ ԱՂՔԱՏՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԻՐԱԿԱՆ ԱՆԴՈՒՆԴԸ

ԱՐԱՄ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Օրերս ինձ մօտեցաւ մի քաղաքացի (կամ գուցէ «կազմաչափական» սաղորիչ) եւ ասաց, որ նա պատրաստ է գրոհով վերցնել Բաղրամեան 26-ը, եւ եթէ իր նման մի երկու հազար «գրոհայիններ» լինեն, ապա գործը գլուխ կը գայ: Սակայն, բացի այս ցնդաբանությունից, նա նաեւ ներկայացնում էր ձիշտ դիտարկումներ, որոնցից մէկն այն էր, որ Հայաստանում մնացել են ամենահարուստներն ու ամենաաղքատները, իսկ դա խնդիր է ազգային անվտանգութեան տեսանկիւնից:

Խօսքը, ինչպէս հասկանում էք, աղքատների եւ հարուստների միջեւ հասգնացող անդունդի մասին է, որը խնդիր է ոչ միայն Հայաստանում: Ռուսաստանում, օրինակ, 10 տոկոս ամենահարուստների եւ 10 տոկոս ամենաաղքատների խզումը կազմում է աւելի քան 30 անգամ, չնայած «պաշտօնապէս» 16 անգամ է: Այս մասին է վերջերս յայտարարել Վիճակագրութեան գիտահետազոտական ինստիտուտի նախկին տնօրէն Վասիլի Սեմչարան, որը լքեց իր պաշտօնը՝ բացակայելով «Յոգնել եմ ստեղծուց»: Սեմչարան բերել է նաեւ մի շարք այլ ուշագրաւ տարբերություններ՝ իրականի եւ պաշտօնականի միջեւ, բայց կենտրոնանաք միայն այս ցուցանիշի վրայ:

Հայաստանում նման պաշտօնական թիւ չկայ՝ խզումը կարելի է որոշել միայն աչքաչափով: Վերցնենք «միջին» աղքատին՝ ամիսը 100.000 դրամ ստացող ուսուցչին եւ միջին հարուստին՝ ասենք, մաքսայինի (ոչ թէ միութեան, այլ ծառայութեան) «միջին» կաշառակերին, որը ստանում է ամիսը 10.000.000 «անաշխատ եկամուտ» (ոնց էլ լինի՝ օրական մի 800 դոլար կը փախցնի): Նրանց միջեւ տարբերությունը 100 անգամ է, ինչը

սկսածը:

Իսկ ըստ էութեան՝ մեր նման փոքր երկիրը նման է այն անօթին, որտեղ տարբեր խողովակներից ջուրը լցուելով փոխում է նրա պարունակությունը: Սրա մասին չպէտք է մոռանան ոչ իշխանութիւնը, ոչ ընդդիմութիւնը, ու կը գայ այն պահը, որ չնայած ֆորմալ ժամանակային քուտաններին, այս իշխանութեան եւ այս ընդդիմութեան ժամանակը կարող է անապատելի սպառուել: Աստուածաշնչում մի այսպիսի տող կայ՝ նրանք

սարսափելի մեծ թիւ է:

Պաշտօնապէս նման թուեր աշխարհում չկան (բոլորը, հաւանաբար, թաքնուած են ճշմարտութիւնը): Ներկայացնեմ ՄԱԿ-ի որոշ տուեալներ. Բրազիլիա՝ 57, 8, Արգենտինա՝ 34, 5, Վրաստան՝ 15, 4, Մեծ Բրիտանիա՝ 13, 8, Ճապոնիա՝ 4, 5: Ըստ որոշ գիտնականների, երկրի կայունութեան համար անհրաժեշտ է, որ այդ խզումը լինի 10 անգամից պակաս: Այդպիսի բարւոք վիճակ էր, օրինակ, ԱՄՆ-ում՝ 1960-70-ական թուականներին: Սակայն Ռեյգանի ժամանակներից սկսած, ինչպէս յայտնի է, իրավիճակը փոխուեց, եւ շարունակուող խզումը Օպամայի վարչակարգի համար լուրջ մարտահրաւէր է:


Ընդհանրապէս, այս հարցով կայ երկու տեսություն՝ մէկը պնդում է, որ այդ խզումը նպաստում է տնտեսութեան զարգացմանը: Իսկ միւսը՝ հակառակը, կարծում է, որ դա զարգացմանը խանգարում է: Ուզում եմ հաւատալ, որ երկրորդ տեսությունը կողմնակիցներն իրաւացի են: Խնդրի «դասագրքային» լուծումները յայտնի են. մասնաւորապէս, եկամուտների վերաբաշխումը հարկերի միջոցով, կրթութեան հաւասար հնարաւորութիւններ տարբեր խաւերի համար:

Բայց Հայաստանի համար այդ դեղատոմսերը, կարծում եմ, կիրառելի չեն: Մեզ մօտ ինչպիսի հարկեր էլ դնես, միւսնոյն է, հարուստները դրանք չեն վճարի, որովհետեւ նրանք կա՛մ սերտացած են իշխանութեան հետ, կա՛մ հենց պաշտօնեայ են: Ինչ մնում է կրթութեանը, ապա այդ դեղատոմսի մասին խօսել է նաեւ վարչապետը՝ իբր կրթութիւնն աղքատութիւնը յաղթահարելու ձեւ է: Բայց դա Հայաստանում չի աշխատում: Մեր խորհրդարանի կէսից աւելին հարուստ մարդիկ են, բայց արդեօ՞ք նրանք հարստացել են կրթութեան շնորհիւ:

Շարք էջ 18








Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աձիրաճեղաւ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄԸ՝ ԱԶԳԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑՈՒՄ, ԹԵ՞ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

Համաշխարհայինացումը, ըստ Ուլիքիֆետիայի, կը կատարուի տեսակէտներու միջազգային-համաշխարհային ամբողջացումով, որ արդիւնք է աշխարհի տարբեր տեսակէտներու՝ արտադրողական, գաղափարախօսական եւ մշակութային արժէքներու փոխանակման: Պարզ բացատրութեամբ, համաշխարհայինացումը այն քայլն է, որ կ'արագացնէ եւ կ'աւելցնէ համաշխարհային եւ միջպետական ազգային եւ մշակութային արժէքներու փոխանակումներու գործընթացը: Տեղեկատուութեան յառաջխաղացքը՝ ճանապարհորդութեան արագացում, էլեկտրոնային հաղորդակցութեան զերգարգացում, ներառեալ համացանցը, գլխաւոր տուեալներն են համաշխարհայինացման: Վերջինը կ'արտադրէ երկիրներու եւ հաւաքականութիւններու միջեւ կախեալ ըլլալու վիճակները՝ տնտեսական եւ մշակութային բնագաւառներուն մէջ:

Թէեւ համաշխարհայինացումը սկսաւ թափ առնել 1990 թուականներէն սկսեալ, սակայն պէտք է նայիլ պատմութեան, երբ եւրոպական ցամաքամասէն հետազոտողներ սկսան գտնել նոր աշխարհներ՝ միջին դարերէն սկսեալ: 20-րդ դարուն սակայն համաշխարհայինացումը սկսաւ ստանալ արագ եւ ուժգին թափ: Երկրորդ հազարամեակին՝ 2000 թուականին, Միջազգային տնտեսական-դրամատնային ֆոնտը կրցաւ որակել չորս տեսակի համաշխարհայինացման գործօններ՝ տնտեսական եւ վաճառականական, ֆինանսական ներդրումներու, ժողովուրդներու տեղաշարժներ՝ տարբեր պատճառներով, տեղեկատուութեան ընդհանրացում եւ սերմանում:

Ներկայ ժամանակներուն մեծ մարտահրաւէր մըն է կլիմայի փոփոխութիւնը՝ միջպետական ու միջազգային ջուրերու եւ օդի ապականումը եւ ովկիանոսներու տարածքներու չաւելեալ գործածութիւնը: Այս բոլորը նաեւ գործօն տուեալներ են, որոնք կ'ազդեն համաշխարհայինացման արագընթաց գարգացման վրայ: Համաշխարհայինացման գործընթացը իր նկարագրային դրոշմը կը դնէ

տնտեսական-աշխատանքային գործարարքներու վրայ՝ տնտեսական եւ ընկերամշակութային նկարագրի կերտման, ինչպէս նաեւ բնութեան եւ շրջապատի զարգացման: Աստուածաբան Ալեքսանտր Շուպիցըրը համաշխարհայինացած աշխարհը կը նկարագրէ որպէս «սահմաններու չքացում», ինչ որ կ'ենթադրէ անհատին ու անոր անհատականութեան ապահովութեան եւ հեղինակութեան նուազում եւ անհետացում: Շուպիցըրը կը շարունակէ՝ մատնանշելով, թէ համաշխարհայինացած աշխարհը եւ իր բոլոր գործօնները իրենց ազդեցութիւնը ունեցած են հաւաքականութիւններու կրօնական, տնտեսական եւ ընկերային կեանքերուն վրայ՝ աշխարհով մէկտեղ:

Ընկերաբան Ռիչըրտ էրիքսը կը հաւատայ, թէ ներկայ մարդկային աշխարհը շատ աւելի լաւ եւ իրարու մէջ միաձուլուած է, քան պատմութեան ընթացքին որեւէ ժամանակ: Այս իմաստով աշխարհը շատ աւելի արագօրէն կը վերածուի եւ կ'ամփոփուի մէկ տեղի մէջ:

Համաշխարհայինացումը ընթացք մըն է, որ իր ազդեցութիւնը կ'ունենայ մարդկային կեանքին վրայ՝ քիչ մը ամէն տեղ: Էրիքսըն կը նկարագրէ այս իրավիճակը՝ համաշխարհայինացումը, դիտել տալով, որ բոլոր ընկերա-մշակութային գործօնները կ'օժանդակեն, որպէսզի տարածաշրջանային հեռաւորութիւնները նուազագոյնի հասնին, կամ, այլ խօսքով՝ անկարելի դառնան: Այս իրավիճակը ունի իր դրական եւ բացասական կողմերը: Եթէ մարդիկ տարբեր շրջաններու եւ երկիրներու մէջ ապրելով հանդերձ պիտի կրնան վայելել տարբեր պատեհութիւններ եւ առիթներ, բայց եւ այնպէս նաեւ վտանգները եւ սպառնալիքները պիտի բաժնուին աշխարհին եւ իրարու մէջ: Որեւէ երկրի քաղաքական, տնտեսական, կենսոլորտային ու այլ իրավիճակները իրենց ազդեցութիւնը պիտի ունենան ուրիշ տեղեր՝ անցնելով անմիջական սահմանները: Մնունդ, ապրելակերպ, երաժշտութիւն, ծանուցում, համաշխարհային գրականութիւն ու տակաւին բոլոր իրավիճակները կը զգենուն ու կ'անցնին սահմանային բաժանումներու իրողականութիւններէն...

ներէն...

Եթէ համաշխարհայինացումը կը նկարագրուի առաւելաբար իբրեւ ճարտարաբանական եւ տնտեսական գործընթաց, բայց պէտք է նկատի առնել նաեւ այլ գործօններու ներգրաւուածութիւնը: Մարդկային իրաւանց հարցը, օրինակի համար, 20-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ ընդհանրացաւ ամէնէն զարգացած Արեւմտեան քաղաքակրթութիւններու մէջ՝ հասնելով մինչեւ աղքատ եւ երրորդ աշխարհի հեռաւոր գիւղերու մէջ ապրող գիւղացիին...:

Շուպիցըրը կը շարունակէ իր վերլուծումը՝ շեշտելով համաշխարհայինացման ստեղծած «փոփոխութեան» եւ անոր որպէս արդիւնք՝ «երկուութեան» իրողականութիւնը: Ան կ'ըսէ, թէ ինքնութեան կորստուածութիւնը քաջալերեց մարդկութիւնը, որպէսզի փնտռէ իր անձը եւ իր հաւաքականութիւնը: «Համաշխարհայինը ամբողջացած է տեղականով եւ անհատով», կ'ըսէ Շուպիցըրը: Եթէ մէկ կողմէ կայ անապահովութեան զգացումը եւ վտանգը, միւս կողմէ կայ տրամադրուածութիւնը հասնելու «նպատակին»՝ մարդկային կեանքի նշանակութեան եւ արժէքին: Տակաւին՝ «հեղինակութեան» կորուստն ու չքացումը ճամբայ բացին ծայրայեղական շարժումներու՝ ըլլալ այդ կրօնական, ազգային եւ ցեղային իմաստով: Խրոնաթիոյ եւ Սերպիոյ պատերազմները, սկոպտիական անջատումի փորձերը՝ 1990 թուականներուն, Ֆրանսայի մէջ ներգաղթի օրէնքներու դէմ պայքարը, Աֆղանիստանի մէջ թալիպանական շարժումը, Հնդկաստանի մէջ հինտու ազգայնամոլական շարժումները, «Իսլամաց(ած)ուած» հայերու իրենց ինքնութեան վերադառնալու տենչը: Եւ տակաւին շատ մը ափրիկեան երկիրներու մէջ ակնատես կ'ըլլանք զօրաւոր ցեղային «զարթնումներու»՝ իրենց քաղաքական իրավիճակներուն մէջ: Միացեալ Նահանգներու մէջ կան բազմաթիւ փոքրամասնութիւններ, որոնք կը պահանջեն իրենց մշակութային եւ քաղաքացիական իրաւունքները: Տակաւին կայ քաղաքական-քաղաքականացած իսլամութիւնը, որ նաեւ սկսած է զօրաւոր կերպով թափ առնել ներկայ աշխարհին մէջ՝ ներառեալ Միջին Արեւելքը...

Ներկայ օրերու այս քաղաքական-քաղաքացիական իրավիճակը, որ դժուար է սահմանել անցեալի

- Պարզ անոր համար, որ ուրացումը մեր ընկերութեան համար շատ վտանգաւոր խնդիր էր: Վտանգաւոր, որովհետեւ ուրացումը պիտի արտօնէր, որ նոր ցեղասպանութիւններ կամ սպանութիւններու գործադրուին: Խորքին մէջ սպանուներու կրկնութեան վախն էր, որ ստիպեց թուրք «նեղ շրջագիծ»-ի հասարակութեան, որ բարձրաձայն խօսին հայութեան եւ քիւրտերու խնդիրներուն մասին:

- Պարոն Զարագոլու, վերջին տարիներուն Պոլիսը շատ աշխուժ կերպով երեւելի դարձաւ սփիւռքահայութեան քննարկման օրակարգերուն մէջ: Ու պարզ է, որ ասկէ առնուազն քսան տարիներ առաջ նման բան երեւակայելն անգամ գրեթէ անհնար էր: Գաղտնիք ալ չէ, որ այդ օրերու հայութեան համար բարդ խնդիր էր Պոլիս նոյնիսկ այցելութիւնը տալը: Գրեթէ թապու մը:

- Կը հասկնամ: Եկէք ընդունինք, որ այդ օրերէն ի վեր թուրքերոյ եւ յատկապէս Պոլսոյ մէջ: Ու ժողովուրդն է, որ ստիպեց իշխանութիւններուն, որ կարեւոր, ազդեցիկ եւ երեւելի փոփոխութիւններ կատարուին թուրքերոյ մէջ: Մարդկային իրաւանց կազմակերպութիւնները դարձան շատ երեւելի ու ստիպեցին իշխանութիւններուն, որ բարեփոխումներ կատարուին երկրին մէջ: Ու պէտք է գիտնանք, որ այսօրուան իշխանութիւնները նոյնը չեն, ինչ որ էին, քեմալականները:

Այս իշխանութիւններուն որդեգրած ուղղութիւնը շատ տարբեր է նախկիններէն: Անոնք եւս ազգայնական երակ ունին, բայց իրենց համար կարեւորագոյնը կը մնայ հաւատքի խնդիրը: Անոնք եւս եղած են հալածուած, ու այդ պատճառով է, որ իրենց հետ կարելի է որոշ փոփոխութիւններու հասնիլ: Հիմա կարելի է արդէն բարձրաձայն խօսիլ Յեղասպանութեան, հայերու եւ քիւրտերու

եւ միւս փոքրամասնութիւններու հարցերուն մասին: Ճիշդ է իրավիճակն այսօր ալ խոչալական չէ, եւ մարդկային իրաւանց խնդիրներն ու կազմակերպութիւնները մեծ աշխուժութեամբ կը շարունակեն իրենց պայքարը:

- Ի՞նչպէս կը գնահատէք Յայաստան-Թուրքիա յարաբերութիւնները:

- Պարզ է, որ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բեմահարթակը այսօր կեդրոնացուած է Սեւծովեան տնտեսական համագործակցութիւն ծիրին մէջ, ու ես շատ կը կարեւորեմ այդ մէկը: Թէպէտ որ այսօր ալ, ինչպէս երէկ, թուրք իշխանութեան ներկայացուցիչները կը կատարեն շատ ծայրայեղական յայտարարութիւններ:

- Ի՞նչու այդպէս:

- (Ժպտալով) Այս մէկը կուզայ բացատրելու, որ բանթուրքիզմը ինչքան կարեւոր է իրենց համար: Համաթրքութեան զգացումները շատ խոր արմատ նետած են թուրք պատասխանատուներուն մօտ: Գալով Կովկասի ընդհանուր իրավիճակին՝ բացառելով պէտք է նայիլ յատկապէս ռուսներուն, որոնք մեծ ու կարեւոր կապեր ունին Հայաստանի եւ Ազրայէջանի հետ: Այդ մէկը կարգիլ է, որ շրջանին մէջ պատերազմ ծագի: Գիտենք նաեւ որ Ղարաբաղեան հարցով խաղաղութիւնը ամբողջական կերպով տակաւին ամբարձրուած չէ: Ըսեմ նաեւ, որ թուրքիա կը փորձէ Ռուսիոյ դերը կապկել: Այսինքն թուրքիա կը փորձէ որպէս գերուժ դառնալ շրջանին մէջ: Բայց իմ կարծիքով դժուար թէ թուրքիա յաջողի այդ դերին մէջ ըլլալ:

- Իսկ ի՞նչ կ'ըսէք Թուրքիոյ Յայաստանին ուղղուած յորդորները Ազրայէջանի հետ իր ունեցած խնդիրները կարգաւորելու վերաբերեալ: Յատկապէս, որ Թուրքիա այդ մէկը որպէս նախապայման կը ներկայացնէ:

- Այստեղ ճիշդ պիտի համարէի, որ մենք նոյն թուրքերոյ իշխանութիւններուն հարց տանք, թէ ի՞նչ եղաւ Կիպրոսի խնդիրը: Եւ ի՞նչ են թրքական իշխանութիւններուն կեցուածքները այդ առումով: Եթէ թուրքերոյ համար Ղարաբաղեան հիմնախնդիր լուծումը կարեւոր է, ապա ան պարտաւոր է նոյն օրինաչափութեամբ մօտենալ ինդիան, ինչպէս կը մօտենայ Կիպրոսի հարցին: Այսինքն, եթէ Կիպրոսի մէջ թուրքիա հանդէս կուզայ որպէս ինքնորոշման իրաւունքի պաշտպան, ապա ան պարտաւոր է նոյնը ընել նաեւ Ղարաբաղեան հիմնախնդրին

վերաբերեալ: Մենք այս հարցումները միշտ լսելի պէտք է դարձնենք թուրքերոյ իշխանութիւններուն:

- Տարի մը առաջ Նիւ-Եորք պարող դերասանուհի Սոնա Թաթոյեանի հետ իմ կատարած հարցազրոյցին մէջ քանիցս խօսք եղաւ Անատոլիոյ մասին: Ու զարմանալիօրէն Անատոլիա բառին օգտագործումը ժխտական մեծ աղմուկ բարձրացուց ըմբոստաններու լայն հատուածներու մօտ: Ի՞նչ ունիք ըսելիք Անատոլիա բնորոշումին մասին:

- Անատոլիան մշակույթներու օրրան է: Այդ տարածքը շատ կարեւոր կեդրոն է՝ հայերուն, յուններուն, թուրքերուն եւ քիւրտերուն համար: Անատոլիան քաղաքակրթութեան կեդրոն է: Քիւրտերն ալ չեն սիրեր Անատոլիա բառակապակցութիւնը օգտագործել: Անոնք Անատոլիան Պէթ Նարին կը կոչեն, եւ իրենց համար Ատորիքի վերացումով Անատոլիոյ մէջ իրենց պատկանող շրջաններուն ծաւալը մեծցաւ:

Աշխարհագրական մեծ փոփոխութիւններ եղան այս շրջանին մէջ ու յատկապէս համաշխարհային Ա. պատերազմին օրերուն ու նաեւ թրքական իշխանութիւններուն որդեգրած քաղաքականութեան հետեւանքով: Պէտք է նաեւ ըսեմ, որ Անատոլիոյ մշակույթը մեզ բոլորիս կապող բան մը ունի իր մէջ ու ատիկա այդ հողին, անոր վրայ տարածուած եւ աճած մշակույթին ուժն է: Ու այդ ուժն է, որ հայերն ու քիւրտերը, թուրքերն ու յոյները տարածած են աշխարհով մէկ: Ուրեմն Անատոլիան կը պատկանի բոլորին: Ան խճանկար մըն է, որ ստեղծած են շատեր: Եւ այդ ժառանգութիւնը կը պատկանի բոլորին:

- Շատ մօտ ենք կանգնած Յայոց Ցեղասպանութեան ոգեկոչման 100-ամեակին: Ի՞նչ ունիք ըսելիք այս առումով, մանաւանդ, որ թուրքերն ալ բաւական աշխուժ են (Ի հարկէ անոնք, որ կ'ընդունին ցեղասպանութեան փաստը):

- Ուրեմն նախ ըսեմ, որ ուրացման քաղաքականութեան հետեւանքով մեր մօտ հայերուն եւ թուրքերուն համար մինչեւ վերջերս ցեղասպանութեան մասին ոչ մէկ տեղեկութիւն կար: Այս առումով իհարկէ կատարուած է մեծ աշխատանք: Ու յատկապէս հանրութեան ներկայացուած աշխատութիւնները մեծապէս օգնեցին, որ հանրութիւնը կարողանայ ճիշդը զանազանէ սխալէն: Ոչ ծայրայեղական թուրքեր սկսան հետամուտ ըլլալ ու տեսնել իրականութիւնը, ու այդ իրականութիւնը օգնեց, որ անոնք ոչ միայն զգացական խօսքերով բաւարարուին, այլ նաեւ ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ կարեւոր աշխատանքներու ձեռնարկեն:

Մեր միջեւ պատեր կան: Գաղտնիք չէ այս մէկը: Բայց երկխօսութիւնը շատ կարեւոր է այդ պատերը քանդելու համար: Գիտեմ, որ շատ աւելի հեշտ է պատեր կառուցել, քան թէ՛ քանդել այդ պատերը: Այդ պատը քանդելու առումով թուրքիա մեծ դեր ունի կատարելիք: Թուրքերը մինչեւ այսօր խուլ ու կոյր կը ձեւանան, ու ժամանակն է, որ մենք ընդունինք արեւմտահայութեան կամ Հայկական սփիւռքին գոյութիւնը: Նախ

ՄԱՂԹԱՆՔ՝ Ս. ՄՍՈՒՐԻՆ ԱՌՋԵԻ

Գեղեցիկ եւ հին սովորութիւն է՝ Յիսուսի Ս. Մննդեան տօնին առթիւ, ընտանեկան յարկերու տակ, յաճախ զարդարուած տօնածառի մը ուրախութիւն բաշխող ցուրբերուն դիմաց, հարազատներ նուէր տան իրարու: Հաւանաբար, այս աւանդութիւնը կողմէս Աւետարանի այն վկայութենէն, երբ լուսաւոր աստղին հետեւող մոգեր արեւելքէն գալով, մանուկ Յիսուսին կը բերեն իրենց նուէրները՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս, իբրեւ աստուածաշնչական խորհրդանշաններ Նորածինին ունեցած թագաւորական, քահանայական եւ փրկչական պաշտօններուն, ու կ'երկրպագեն Անոր:

Նուէրը ինքնին էական է: Իսկութեան մէջ նիւթը է որ ուրախութիւն կը պատճառէ, այլ՝ անոր ընդմէջէն արտայայտուող անկեղծ սէրը, յարգանքը եւ ընծայուած մասնաւոր ուշադրութիւնը: Նուէր մը պէտք է խօսի, -կ'ըսեն, ոչ թէ իր նիւթական արժէքով, այլ այն սիրով ու ջերմ զգացումներով, որոնցմով ան կը տրուի:

Այս առնչութեամբ, պիտի ուզէի ձեր ուշադրութիւնը հրաւիրել առաքեալներու կեանքէն դրուագի մը վրայ, որ մեզի կու տայ խորիմաստ պատգամ մը.

Սողոմոնի տաճարի Գեղեցիկ կոչուող դրան առջեւ, ի ծնէ կաղ մը ողորմութիւն կը խնդրէր Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներէն: Մուրացիկին դառնալով, Պետրոս առաքեալ անոր կու տար այն, ինչ որ ի ծնէ այդ կաղը իսկապէս պէտք ունէր. Արծաթ եւ ոսկի չունիմ, բայց ինչ որ ունիմ՝ գայն քեզի կու տամ. յանուն Նազովրեցի Յիսուս Քրիստոսի՝ ոտքի ելիր եւ քալէ (Գործք Գ, 6):

Առաքեալներ թերեւս կրնային ոսկի կամ արծաթ դրամի կտոր մը տալ այդ կաղ մուրացիկին, բայց ինչ պիտի փոխէր այդ ողորմութիւնը անոր կացութեան մէջ. միեւնոյնն է, ան միշտ պիտի մնար տխրած հաշմանդամ մը, եւ մինչեւ իր կեանքին վերջը պիտի շարունակէր ըլլալ մուրացիկ մը՝ դատապարտուած նստելու Սողոմոնեան տաճարի Գեղեցիկ դրան առջեւ:

Արդարեւ, ինչ տարօրինակ հակասութիւն մը կը ներկայացնէ Սողոմոնի տաճարի այդ մուրացի Գեղեցիկ անունին հետ կապուած մարդկային տգեղութեան փաստը, որ իր հէզ անձին մէջ կը մարմնաւորէր իր մօր որովայնէն կաղ ծնած այդ մարդը: Բայց անոր կեանքին մէջ պատահեցաւ ամենագեղեցիկն ու հրաշալին, այն ինչ որ ամենաբաղձալին ու անհրաժեշտն էր իրեն համար: Աներեւակայեղին եւ անկարելին դարձաւ կարելի, եւ իսկապէս՝ Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով ան ոտքի ելաւ, սկսաւ քալել եւ գլխատուած փառաւորել:

Յիրաւի, ինչ բանի պէտք ունինք նիւթական եւ վաղանցուկ այս աշխարհի մեր ապրած կեանքին մէջ, եթէ ոչ՝ Աստուծոյ ներկայութիւնը մեր գոյութեան առաջնորդ, իր կեն-

սաբաշխ օրհնութիւնը մեր գլխուն վերեւ, մարմնական քաջառողջութիւն եւ հոգեկան երջանկութիւն՝ կենսական պայմաններ, որոնք հիմնականօրէն կախուած են կեանքի նկատմամբ մեր ճիշդ արեւելումէն ու ճշմարիտ արժէքներ գնահատելու մեր կարողութենէն:

Եթէ գիտնայինք թէ մեր գոյութիւնը եւ անձնական կեանքի երջանկութիւնը ոչ անպայման անվերջ ունենալուն եւ կուտակելուն, այլ գերազանցապէս ըլլալուն մէջ կը կայանայ:

Եթէ կարենայինք մեր գիտակցութեան մէջ զնահատել եւ ապրելակերպով կիրարկել չափաւորութեան առաքինութիւնը, բաւարարուիլ մեր անմիջական կարիքներուն համար մեր ունեցածով, իսկ մնացած բարիքը բաժնեկցիլ տնանկներուն եւ չբաւարներուն հետ: Այսօր, երբ հետզհետէ կը լարուի մարդկային ընկերային կեանքին մէջ դասակարգերու միջեւ բաժանումը, հարուստին աւելի հարստացումով, իսկ աղքատին ալ առաւել եւս աղքատացումով, վերջերս պատահած տնտեսական համաշխարհային աղէտէն ետք, ոչինչ կը բարեփոխուի մարդկային հասարակական կեանքին մէջ, եթէ դասակարգերու միջեւ առաջացած վտանգաւոր բաժանումները չյաղթահարուին Աստուծոյ պարգեւած բարիքը իրար միջեւ բաժնելու սկզբունքով: Այսպէս, աշխարհի հետ մարդու գոյութեան նիւթական պայմանաւորուածութիւնը, կրնայ հեղ մը աւելի բարելաւուիլ, Յիսուսի Ս. Մննդեան առթիւ հրեշտակներու օրհներգած Փա՛ռք Աստուծոյ՝ բարձունքներու մէջ, եւ երկրի վրայ խաղաղութի՛ւն, եւ մարդոց միջեւ հաճութի՛ւն (ՂԿ Բ, 14) աւետիսի իրականացման ճամբուն վրայ:

Այսօր, կանգնած Ս. Մննդեանի ալ աւելի գեղեցիկ, խորախորհուրդ եւ սքանչելի տաճարի դրան առջեւ, սրտաբուխ աղօթքներուս հետ ձեզի, սիրելիներ, պիտի ուզեմ առաքելական թանկագին նուէր փոխանցել ձեր կեանքին համար ամենաբարիին, առաջնահերթին եւ անհրաժեշտին իրականացումի մաղթանքը: Նազովրեցի Յիսուս Քրիստոսի անունով՝ ինչ որ մաքուր սրտով խնդրէք Աստուծմէ, թող տրուին ձեզի:

Շնորհաւոր եւ շնորհաբեր ըլլայ ձեր Նոր Տարին, օրհնեալ ըլլայ նաեւ Ս. Մննդդը:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ

ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Սիրալիր եւ ջերմ ողջունիւ մնամ ձերդ աղօթարար՝

Աբէլ Քհնյ. Մանուկեան

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱԶԳԱՊԱՅՊԱՆՄԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Այսօր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ամէնուրեք կը տօնախմբէ Քրիստոսի Մննդեան փառահեղ ու հրաշափառ յիշատակը: Կը մեծարէ Քրիստոսի անմեռ ու յաւիտենական Մնունդը: Մնունդ մը, որ ներկայ ժամանակին մէջ պարփակուած է եւ տակաւին՝ ժամանակը իրմով գոյացած:

Աստուածայայտութեան խորհուրդը Աստուծոյ եւ մարդուն, երկրի ու երկնքի ուրախ հանդիպման՝ յոյսի ու յաւիտենական կամուրջն է, եւ երանելի են անոնք, որոնք այս խորհուրդին քաջ գիտակցութիւնը ունին, որովհետեւ Բեթղեհէմ քաղաքի մէջ ծնող Արքան ճանչցողը՝ ինքզինք ճանչցած կ'ըլլայ ու Աստուածատիպ մարդ կը դառնայ: Այն մարդը որ ինքզինք կը ճանչնայ արդարութեամբ եւ խաղաղութեամբ, սիրով եւ համերաշխութեամբ, նուիրումով եւ կոչումով կ'ապրի: Որովհետեւ ինքզինք ճանչցող անձը ինքն իր հոգեկան ու բարոյական արժէքներուն խոր գիտակցութիւնը կ'ունենայ, ներքնապէս ի բարին կը կերպարանափոխուի, վերանորոգեալ մարդ կը դառնայ եւ իր Ազգին ու Եկեղեցւոյ արդարութեան, խաղաղութեան, բարգաւաճման եւ գոյատեւման համար կը պայքարի: Հայ ժողովուրդի հաւաքական եւ անհատական մակարդակներու վրայ Քրիստոսի Մննդեան խորհուրդին ճշմարիտ իմաստը ինքնաճանաչման մէջ կը կայանայ, որովհետեւ ինքնաճանաչումը Աստուած մարդուն մէջ փոխակերպում եւ ինքնաբերկեցում է:

Մեր Ազգի հաւաքական կեանքին մէջ երբ արդարութիւնը բաւարար չափով յարգուի ու գործադրուի, բնականաբար խաղաղութիւնը կը տիրէ: Արդարութիւնը խաղաղութեան նախաքայլն է Հայ հոգեւոր, քաղաքական եւ բարոյական արժէքներու պահպանմամբ առաջնորդուած եւ անոնց հանդէպ պատկանելիութեան վեհ զգացումներով օժտուած:

Այսօր մենք որպէս Հայ ժողովուրդ, որքանով արդարացած ենք ըլլալ եւ մնալ Քրիստոսի Մննդեան խորհուրդին իսկական հետեւորդներն ու ժառանգորդները: Որքանով ըմբռնած ենք եւ կ'ապրինք խաղաղութեան, արդարութեան, պատկանելիութեան իրականութիւնն ու գերագոյն ճշմարտութիւնը: Կարենալ գոյատեւելու համար, Քրիստոսի Մննդեան պատգամը կը թելադրէ մեզի Հայ Ազգին հոգեկան եւ բարոյական արժէքներու հզօրացման եւ արմատացման խթանիչ ուժը ըլլալ: Դժբախտաբար այսօր մեր կեանքի առաջնահերթ սկզբունքներն ու պարտականութիւնները վերջիններ հանդիսացած են եւ վերջինները՝ առաջին: Բարին ու չարը զանգանելու կարողականութիւնը կորսնցուցած ենք: Կարձած ենք կոյր արդարութեան արեգակը տեսնելու: Դարձած ենք խօսք եւ ձեւականութիւն ու հեռացած խորքային ու առանցքային շինարար եւ

հիմնական արժէքներէն:

Օրէ օր մեր բոլորին աչքերուն առջեւ կը ստուերանան հեռատես եւ իմաստուն հայերը, տարուած տարբեր խաբուսիկ երեւոյթներու: Օրէ օր կը բազմապատկուի թիւը ընտանիքներու, ուրկէ կը բուրեն ամէն տեսակ անհոգութիւն եւ անտարբերութիւն, եւ ուր կը նօսրանայ բոլոր Հայկական բարձր ոգիին: Օրէ օր կ'ուռճանայ թիւը հաւաքականութիւն կազմող այն անձերուն, որոնք մակերեսայնօրէն կը կրեն իրենց ինքնութեան թուղթերը, բայց կը մնան գուրկ Ազգային ինքնուրոյն կեցուածքէն: Անոնք անունով հայեր են, բայց ոչ կամքով ու կեանքով:


Հայ մարդը չի կրնար միայն ինքն իրեն համար ըլլալ, որովհետեւ Հայ ըլլալ կը նշանակէ վերացականութիւնը անդրանցիլ եւ պատկանելիութեան զգացումներով խիզախօրէն ապրիլ: Գաղափարականի մարդ ըլլալ եւ մանաւանդ նպատակի համար ապրիլ: Քրիստոս ինքնզինք պատարագեց՝ ինքնամատուց եղաւ իր ժողովուրդին համար, որովհետեւ նպատակն էր հոգեւորապէս ազատագրել խաւարի մէջ խարխափող ժողովուրդը: Ան նպատակ մը իրագործելու համար եկաւ եւ իրագործեց այն ինչ որ իրեն վստահուած ու յանձնուած էր: Շատ բնական է, որ աննպատակ կեանքը մեռած-ապրողներու կեանք է: Կեանք մը, որուն մէջ իմաստ եւ նշանակութիւն գոյութիւն չունին: Որպէս Հայ մեր հաւաքական եւ անհատական կեանքը պէտք է դառնայ ինքնագոհողութեամբ լեցուն կեանք մը, ի սպաս Աստուծոյ, ի վայելումն մեր ժողովուրդի հոգեւոր, բարոյական, կրթական, քաղաքական, մշակութային, յեղափոխական եւ ազգային մակարդակներու վրայ հաւասարապէս:

Նոր սերունդի դար է այս դարը: Անոնք մեր վաղուան կերտիչները չեն միայն, այլ նաեւ ու մանաւանդ այսօրուան: Անոնց յանձնառու պատասխանատուութիւն պէտք է սորվեցնել եւ նաեւ արդարութեամբ եւ խաղաղութեամբ դատարարակել, որպէսզի միշտ վառ մնայ Հայութեան յոյսի ու յարատեւութեան հոգին:


Մէկ է Հայութեան պայքարն ու նպատակը: Ո՛չ մէկ հայ իրաւունք ունի հեռու մնալու այս Ազգային եւ հոգեւոր պարտաւորութիւններէն: Պէտք է խոհեմութեամբ եւ իմաստութեամբ պայքարինք մեր իրաւունքներուն վերատիրացման եւ նաեւ ի խնդիր մեր գոյութեան պահպանման ու ամրացման:

Յիսուսի Մննդը մեր անձերու վերակերտման ծնունդը ըլլայ եւ մեր Ազգին ու Եկեղեցիին սէր, միութիւն, արդարութիւն եւ խաղաղութիւն բերէ: Նոր տարուան սեմին, Մննդի խորախորհուրդ ցնծութեան մէջ, ամբողջ հայութեան կ'ուզեմ աւետել ըսելով. «Քրիստոս Մնաւ եւ Յայտնեցաւ»: Վրոյր Տէմիրճեան

933 W. Glendale Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծախառնակներու և մանուկներու Թայրոփորաքթիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդանոցի և մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթարի նետանցումով պատճառած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
հեռաձայնել՝ (626) 398-0506

ՎԷՆ ՆԱՅԻՍ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ՅԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ԵՒ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի, Դեկտեմբեր 22ին, Վեն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցու Անուանակոչութեան Տօնին առթիւ Սուրբ Պատարագ մատուցեց քարոզեց Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրութեան: Սուրբ Սեղանին սպասարկեցին Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Շնորհք Աւագ Քհնյ. Տէմիրձեան եւ Սարկաւազները: Իսկ երգեցողութիւնը կատարեց եկեղեցու երգչախումբը՝ ղեկավարութեամբ Տիկին Մարգրիտ Զաւենի: Սրբազան Հայրը իր քարոզին մէջ շեշտեց հաւատացեալի խոնարհութեան մասին՝ կատարելով Սուրբ Գրային մէջբերումներ եւ անդրադառնալով Սուրբ Պետրոս Առաքեալի կեանքին եւ գործունէութեան: Քարոզի ավարտին Սրբազան Հայրը իր յատուկ գնահատութիւնը յայտնեց Ծուխի Հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդին, Սարկաւազներուն, Երգչախումբին եւ Ծուխի յարակից

բոլոր կազմակերպութիւններուն՝ ի նպաստ Ծուխի առաւել բարգաւաճման իրենց մատուցած նուիրեալ ծառայութիւններուն համար: Սուրբ Պատարագի ավարտին Սրբազան Հայրը կատարեց մատաղի աւանդական օրհնութիւնը, որ հաւատացեալներուն բաժնուեցաւ եկեղեցու մոտեքին՝ մինչ հաւատացեալներ եկեղեցիէն դուրս կ'ելլէին լեցուած յոյսով եւ սիրով: Սրբազան Հայրը Սարկաւազներու եւ Ծխական Խորհուրդի անդամներու կողմէ առաջնորդութեամբ ղեկավարեց Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցու Կիրակնօրեայ-Շաբաթօրեայ Դպրոցի Շէնքը, ուր պաշտօնական բացումը կատարուեցաւ ժապաւէնի հատումով: Սրբազան Հայրը սպասուեց գործեց փոքր սրահը, ուր «Հոգեւոր» աղօթքը արտասանեց իսթանպուլի մէջ վերջերս վախճանած Արժ. Տ. Յովնան Քհնյ. Իսթանպուլեանի հոգիին համար:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՍԵՂԵԴԻՆԵՐՈՒ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Երկրի Սուրբ Մննդեան ձրագալոյցի օրը՝ Դեկտեմբեր 24ի երեկոյեան Վեն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցու մէջ հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, կատարուեցաւ յատուկ արարողութիւն՝ մասնակցութեամբ Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Շնորհք Աւագ Քհնյ. Տէմիրձեանի եւ Բրշ. Ճան Սրկ. Լիւլէճեանի: Արարողութեան ավարտին Եկեղեցու երգչախումբը, Կիրակնօրեայ եւ Շաբաթօրեայ Դպրոցի աշակերտները երգեցին Սուրբ Մննդեան մեղեդիները (Christmas Carols): Երգչախումբը ղեկավարեցին Տիկին Մարգրիտ Զաւենի եւ Սեւակ Տէրտէրեան: Իսկ երգեհոնա-

հարն էր Տոքթ. Ռան Սինանեան: Այս տարի Սուրբ Ընտանիքը ներկայացուցին Ծուխի նախկին Երիտասարդաց Վարիչը եւ այժմու Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչը՝ Տիար Փիլիքը Կորյուեան եւ իր Տիկինը Նունէ եւ իրենց նորածին զաւակը՝ Տին: Տիկին Մարգրիտ Լիւլէճեան նոր երգ մը ներկայացուց արարողութեան մէջ, որու ընթացքին Կիրակնօրեայ Դպրոցի ուսանողները եկեղեցի մուտք գործեցին: Արարողութեան ավարտին Սրբազան Հայրը իր գիրկը առաւ երախան, սպասուեց հաւատացեալները՝ անոնց փոխանցելով սիրոյ, յոյսի եւ բարեբերութեան մաղթանքներ:

«ՅԱՅԱՍՏԱՆ» ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՅԱՆԴԵՍ

Դեկտեմբեր 27ին Կլէնտէյլի «Հայաստան» Մանկապարտէզի աշակերտները ներկայացուցին իրենց Նոր Տարուան եւ Սուրբ Մննդեան թատերգութիւնը: Արժ.

Տ. Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեան եւ Քահանայութեան Թեկնածու՝ Բրշ. Սեւան Սրկ. Փալանճեան ներկայացուցին Առաջնորդ Սրբազան Հայրը: Յայտագրի

ԽՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԼԱԻՎՈՅՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մեր մշակոյթին մէջ, գրեթէ բոլոր կիները կը ստանան ճաշ պատրաստելու պարտականութիւնը: Ոմանք մեծ սիրով եւ հաճոյքով այս պարտականութիւնը կը վերածեն հաճելի ժամանցի, իսկ ուրիշներու համար խոհանոցի աշխատանքը պատիժ է:

Կարգ մը մարդիկ հաճոյքով կը պատրաստեն բարդ ուտելիքներ, իսկ ուրիշներ՝ առաւելագոյն չափով դիւրին եւ պարզ բաղադրութիւններով ուտելիքներ կը նախընտրեն պատրաստել:

Ամէն պարագաներուն, ճաշ պատրաստելը կը մնայ առօրեայ կեանքի ամէնէն անհրաժեշտ եւ կարեւոր մասը, որմէ անկարելի է խուսափիլ: Scientific American Mind ամսաթերթը իր Նոյեմբեր/Դեկտեմբերի թիւին մէջ հրատարակած է այս գծով յօդուած մը՝ Sunny Sea Gold-ի գրիչով: Այս յօդուածը անդրադարձած է խոհարարական կարողութիւնները բարելաւելու լաւագոյն չորս միջոցներուն:

Ըստ հեղինակին, առաջին հերթին կարեւոր է կեդրոնանալ պատրաստութեան գործընթացին վրայ՝ արհամարհելով կեդրոնացումը շեղող գործօնները: Կեդրոնացումի պակասը կրնայ պատճառ դառնալ յաւելեալ ճանձրոյթի եւ սխալներու գործման: Արդիւնքը կ'ըլլայ անհամ ուտելիք, որ կը նուազեցնէ կրկին ճաշ պատրաստելու խանդավառութիւնը եւ ներուժը:

Psychological Science ամսաթերթը քանի մը տարիներ առաջ նշած է թէ meditation կատարող անձերու մօտ աւելի բարձր է կեդրոնացումի մակարդակը նոյնիսկ ճանձրացուցիչ աշխատանքներու պարագային:

Երկրորդ ամէնէն կարեւոր կէտն է նախապէս պատրաստել բոլոր բաղադրութիւնները: Հաւանաբար,

այս պատճառով է, որ հեռատեսիլէն ափուռած յայտագիրներուն ընթացքին, խոհարարները բաւական հանգիստ եւ հանդարտ կ'աշխատին: Հանգստութիւնը կ'առաջնորդէ կեդրոնացումի: Իսկ երբ հանգիստ եւ կեդրոնացած ըլլանք աշխատանքի ժամանակ, արդիւնքը աւելի բարձր մակարդակով կ'ըլլայ: Յօդուածին հեղինակը նաեւ կը թելադրէ զուարճալի դարձնել ճաշ պատրաստելու գործընթացը՝ խօսելով եւ հեռատեսիլի յայտագրի նման բացատրելով բաղադրութիւնները:

Երրորդ ամէնէն կարեւոր կէտն է՝ փորձառութիւնը: Հեղինակը կ'ըսէ, որ եթէ կ'ուզէք լաւ խոհարար դառնալ, ուրեմն յաճախ ճաշեր պատրաստեցէք: Ի մտի ունեցէք որ լաւագոյն խոհարարներու յաջողութեան գաղտնիքներէն մէկն է փորձառութիւնը: Անոնք յաջող են, որովհետեւ իրենց ժամանակին մեծ մասը նուիրած են իրենց աշխատանքին: Առնուազն շաբաթը երեք անգամ ճաշ պատրաստելը կ'օգնէ սխալները սրբագրելու եւ աշխատանքը արագացնելու: Ի վերջոյ, ուտելիք պատրաստելու աշխատանքը պէտք է վերածուի սովորութեան:

Չորրորդ ամէնէն կարեւոր կէտն է յայտնաբերել ձեր կամ ձեր ընտանիքի անդամներուն նախափրած բաղադրութիւնը կամ համեմը, որպէսզի անոնք յաճախ օգտագործէք ձեր պատրաստած ուտելիքներուն մէջ: Ընդհանրապէս կարագը եւ սոխը հաճելի համեմներ են, որոնք կը գոհացնեն գրեթէ բոլորին ճաշակը:

Այս բոլորին կողքին, կարեւոր է հաւատալ որ զարգացումը եւ յառաջդիմութիւնը կարելի է ինքնաշխատութեամբ ձեռք բերել: Պէտք է նաեւ հաւատալ փոփոխութեան կարելիութեան եւ ունենալ յառաջդիմելու փափաքը եւ կամքը:

սկիզբը փոքրիկները միասնաբար արտասանեցին Տէրունական Աղօթքը: Տնօրէնուհի եւ թատերգութիւնը կազմակերպող Տիկին Քնարիկ Շարամաթեան բարի գալուստ մաղթեց ծնողներուն եւ հիւրերուն: Տէր Հայրը Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութիւններն ու ջեր-

մագին մաղթանքները փոխանցեց փոքրիկներուն, ուսուցչական կազմին եւ ծնողներուն: Տիկին Շարամաթեան իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր՝ իր հայրական հոգածութեան եւ զօրակցութեան համար:

INNOVATIVE
Designs Manufacturing, Inc.
 idmifurnishings.com

ՈՒՐԱԽ ՄԱՐԴՈՑ ՄՕՏ ԲԱՐՁՐ Է ԳՈՂՆԱԼՈՒ ԶԱԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Psychological Science ամսագրերը իր Ապրիլ ամսուան թիվին մէջ կը քննարկէ ուրախութեան եւ գոգոլութեան միջեւ կապին մասին: Հիմնուելով Գորնէյի համալսարանի հետազոտական խումբի կատարած փորձարկումներուն վրայ, ամսագրերը կը գրէ, որ ուրախ մարդիկ աւելի հաւանական է, որ գոգոլութիւն կատարեն քան տխուր մարդիկ: Աւելին, մարդ մը աւելի հաւանականութիւն ունի գոգոլութիւն կատարելու, երբ ուրախ ըլլայ:

Այս կապակցութեան հոգեբանական բացատրութիւններէն մէկը այն է, որ ուրախ մարդը աւելի ճկուն կ'ըլլայ եւ հետեւաբար կրնայ իր համոզումները դիւրութեամբ յարմարեցնել կացութեան: Հետեւաբար, ուրախ մարդիկ, որոնք համոզուած են, որ գոգոլութիւնը վատ արարք է կրնան դիւրութեամբ վերատեսութեան ենթարկել իրենց համոզումը, երբ կարիքը գգան:

Դիւրութեամբ յարմարելու ճկունութիւնը մեծ հարստութիւն է բոլորիս համար: Յարմարելու կարողութիւնը առողջ մտքի արդիւնք է: Ուրախութիւնը եւ հանգստութիւնը կը նպաստեն այս կարողութեան: Գոգոլութեան պարագայէն բացի, ընդհանրապէս կարեւոր է յարմարիլ կացութիւններուն:

ՇԱԲԱԹԱԿԵՐՁԻՆ ՍՊԱՌՈՒԲՈ ԱԼՔՈԼԻ ՔԱՆԱԿԸ ՊԵՏՔ Է ՉԱՓԱՒՈՐ ԸԼԼԱՅ

Ալքոլ պարունակող խմիչքներու ազդեցութիւններուն վրայ կատարուած հետազոտութիւններն ու փորձարկումները բազմաթիւ են: Օրական դրութեամբ չափաւոր ալքոլի սպառումը օգտակար է թէ սրտի առողջութեան եւ թէ մտային առողջութեան համար: Կարգ մը պարագաներուն, բժիշկներ կը թելադրեն ալքոլի սպառումը: Սակայն այս չի նշանակեր որ ալքոլը ժխտական ազդեցութիւն չունի առողջութեան վրայ:

Նոր ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ թէ շաբաթավերջին չափազանց մեծ քանակով ալքոլի սպառումը ժխտական ազդեցութիւններ կրնայ ունենալ ուղեղին եւ մարսողական դրութեան վրայ: Ըստ հետազոտութեան մանրամասնութիւններուն, շաբաթավերջին նուազագոյնը մէկ ու կէս լիթր ալքոլի սպառումը կրնայ փճացնել բջիջներու DNA-ները:

Ըստ փորձագէտներուն, ժամանակի ընթացքին այս ձեւով խմելու սովորութիւնը կրնայ փճացնել բջիջներու 44 առ հարիւրը:

ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ԶԱՐՍՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԵԾ ԴԵՐ ՈՒՆԻՆ ԾՆՈՂՆԵՐՈՒ ԼՈՒՌ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հարուստ բառամթերք ունեցող փոքրեր կրնան մեծ յաջողութիւններ ձեռք բերել թէ՛ դպրոցին մէջ եւ թէ՛ իրենց ընկերային կեանքին մէջ: Ապագային անոնք կրնան նաեւ յաջող դառնալ իրենց ասպարէզին մէջ:

Այս ծիրին մէջ, մեծ դեր ունին ծնողները, որոնցմէ կը սորվինք մեր առաջին բառերը:

Հետաքրքրական է, որ ամերիկեան նոր ուսումնասիրութիւն մը ցոյց տուած է թէ ծնողներու օգտագործած բառերը չեն որ կը հարստացնեն փոքրերուն բառամթերքը: Այլ խօսքով՝ օգտագործուած բառերուն քանակը չի նպաստեր փոքրերու բառերու ընկալումին: Ուսումնասիրութեան շնորհիւ ի յայտ եկած է թէ ծնողներու օգտագործած դէմքի եւ մարմնի արտայայտութիւնները, ինչպէս նաեւ աչքի նայուածքները հիմնական դեր ունին փոքրերու լեզուի հասկացողութեան եւ արտադրութեան աշխատանքներուն մէջ: Այս ուսումնասիրութեան ամէնէն կարեւոր բաժինը 14-էն 18 ամսական փոքրերու մասնակցութեամբ կատարուած փորձարկումն է, որուն արդիւնքները ցոյց տուին թէ ծնողներու օգտագործած արտայայտութիւններուն մակարդակը կրնայ ազդել նոյնիսկ մէկ տարեկան փոքրերուն վրայ:

ԳՐԱՒՈՐ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԱՌՈՂՋԱՑՆԵԼ ՖԻԶԻԲԱԿԱՆ ՎԵՐՔԵՐԸ

Հոգեբանական ծիրին մէջ յստակ դարձած է թէ յատկապէս ժխտական գզացումներու գրաւոր արտայայտութիւնը կրնայ դարմանել մարդոց հոգեկան վիճակը: Գրաւոր արտայայտութիւնը ներկայիս կ'օգտագործուի հոգեբուժման մէջ մասնագէտ հոգեբաններու կողմէ:

Նոր հետազոտութիւն մը կը յայտնաբերէ թէ խոր գզացումներու գրաւոր արտայայտութիւնը նաեւ կրնայ բուժել ֆիզիքական վէրքերը: Գիտնականները այս եզրակացութեան հասնելու համար կատարած են հետաքրքրական ուսումնասիրութիւն մը մասնակցութեամբ 49 առողջ մասնակիցներու: 64-էն 97 տարեկան մասնակիցները երեք յաջորդական օրերու ընթացքին օրական քանակ վայրկեան գրեցին իրենց գզացումներուն մասին: Մօտաւորապէս երկու շաբաթ ետք, բժիշկները այս մասնակիցները ենթարկեցին biopsy-ի:

Հետազոտութեան ակարտին ի յայտ եկաւ թէ գրաւոր արտայայտութիւններ կատարած մասնակիցներու 76 առ հարիւր համեմատութիւնը աւելի արագ կ'առողջանայ:

Նախապէս կատարուած փորձարկումներու համաձայն, ֆիզիքական եւ հոգեկան առողջութիւնները փոխազդեցութիւն կ'ունենան իրարու վրայ: Որքան առողջ ըլլայ մեր հոգեկան վիճակը այնքան առողջ կ'ըլլայ մեր ուղեղը եւ մարմինը: Ծիչդ է նաեւ հակառակը՝ երբ առողջ ըլլայ մեր ուղեղը եւ մարմնի ֆիզիքական աշխատանքները բնական ընթացք ունենան, մեր հոգեկան առողջութեան մակարդակը կը բարձրանայ:

ՄԱՆՐԵՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԱԶԴԵԼ ԶՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ

Բազմաթիւ ուսումնասիրութիւններու համաձայն՝ մարսողական օրկանները եւ ուղեղի աշխատանքը առնչուած են իրարու հետ: Այս տեսութեան հիման վրայ կարելի է եզրակացնել, որ մարսողական դրութիւնը կրնայ ազդել մեր միտքերուն, գզացումներուն եւ արարքներուն վրայ: Գիտնականներ վերջերս յաջողած են գիտական բացատրութիւններ յայտնաբերել այս առնչութեան մասին:

Ըստ նորագոյն ուսումնասիրութիւններու արդիւնքներուն, մարսողական դրութեան հետ կապուած մանրէ մը, որ կը կոչուի gut bacteria կրնայ պատճառ դառնալ ընկճուածութեան (depression) ախտանշաններու յայտնումին եւ սաստկացնել այս ախտանշանները:

Սովորաբար, մարսողական դրութեան մէջ ներառուած օրկանները թոյլ չեն տար, որ այդտեղ գտնուող մանրէները դուրս ելլեն եւ անցնին արեան մէջ, սակայն նոր հետազոտութեան մը ընթացքին գիտնականներ յայտնաբերած են gut bacteria կոչուող մանրէի գոյութիւնը՝ արեան մէջ: Այս հետազոտութեան պարագային, ընկճուածութեամբ ախտաճանաչուած մասնակիցներու 35 առ հարիւր համեմատութեան մօտ յայտնաբերուած է այս մանրէն:

Գիտնականները տակաւին չեն գիտեր այս մանրէին եւ ընկճուածութեան միջեւ կապակցութեան մանրամասնութիւնները, սակայն քանի մը փորձարկումներու շնորհիւ յայտնաբերուած է թէ արեան մէջ անցած մանրէները կը պատճառեն բորբոքումներ, որոնք իրենց կարգին կ'աշխուժացնեն մարմնի դիմադրողականութիւնը:

Այս դիմադրողականութեան աշխուժացումը մեծապէս առնչուած է ընկճուածութեան, վատ տրամադրութեան եւ յոգնածութեան հետ: Այս ձեւով է, որ մանրէները կրնան ազդեցութիւն ունենալ գզացումներուն եւ վարմունքին վրայ:

Ի դէպ, մարսողական դրութիւնը կը պարունակէ մօտաւորապէս հարիւր թրիլիոն մանրէներ, որոնցմէ քանի մը հատը նշմարելի ազդեցութիւն ունին ուղեղի աշխատանքներուն վրայ:

Հէլիքոպաթէր Բիլորի կոչուող մարսողական մանրէն սովորական փոքրերուն մօտ եւ առնչուած է IQ-ի ցած մակարդակին հետ: Այս մանրէն կը յառաջացնէ բորբոքում, որը ամէնէն շատ կ'ազդէ ուղեղի աշխատանքներուն վրայ:

Ըստ այլ ուսումնասիրութիւններու, մարմնին մէջ Լաքթոպաթիլի մանրէին քանակը յատկապէս կը բարձրանայ ճնշուածութեան (stress) ժամանակ:

Կարգ մը մանրէներ, ինչպէս՝ Լաքթոպաթիլը Հէլիքթըս եւ Պիֆիդոպաթիլը Լոնկըմ կրնան դրական ազդեցութիւն ունենալ ուղեղին վրայ: Այս մանրէները կրնան մեղմացնել անձկութիւնը (anxiety) եւ ճնշուածութիւնը:

ԲԱԽՏԱԽԱՂԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՈՐՈՆՔ ԿՐ ԿԱՆԽԱՐԳԻԼԵՆ ՄՈԼՈՒԹԻՒՆԸ

Տարիներ առաջ բախտախաղերը ամէնէն շատ սովորական էին յատուկ ակումբներու կամ զազինոներու մէջ: Ներկայիս բախտախաղեր գոյութիւն ունին համացանցային կայքէջերու վրայ, վիտէօ խաղերու վրայ, բջիջային հեռաձայններու վրայ եւ հետեւաբար հասանելի են բոլորին:

Նոր հետազոտութիւն մը, որ կատարուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ, ցոյց տուած է թէ նախորդ տարուան ընթացքին ամերիկացիներու 72 առ հարիւր համեմատութիւնը առնուազն մէկ անգամ մաս կազմած է բախտախաղի: Այս համեմատութիւնը բաւական մեծ է, սակայն ըստ մասնագէտ հոգեբաններուն այնքան ալ մտահոգեցուցիչ չէ, որովհետեւ աշխարհի բնակչութեան միայն մէկ առ հարիւր համեմատութիւնը իսկապէս մոլի է բախտախաղերու:

Հարվորը համալսարանի բժշկական բաժանմունքի հետազոտական խումբը հետեւած է աւելի քան քառասուն հազար անձերու բախտախաղի մասնակցութեան ընթացքին: Համագործակցութեամբ բախտախաղի վայրերու եւ համացանցային ընկերութիւններու, գիտնականները կ'աշխատին ստեղծել ծրագիր մը software, որ կ'ուղղէ անձը, որպէսզի մոլի չդառնայ եւ չկորսնցնէ իր դրամները:

Հետաքրքրական է, որ գազինոյի մը տէրը ինչո՞ւ պիտի ձեռնարկէ նման աշխատանքի: Սակայն

տրուած ըլլալով որ մոլիները կը կազմեն միայն մէկ առ հարիւր համեմատութիւն, անոնց կորուստը նշմարելի նուազում չարձանագրեր գազինոներու տէրերու ընդհանուր շահերուն մէջ: Այս մոլիներուն վրայ վստահելով չէ, որ բախտախաղի վայրերու տէրերը կրնան ապահովել իրենց շահերը, նախ որովհետեւ մոլիները կրնան որեւէ ժամանակ հրաժարիլ խաղալէ եւ ապա անոնք միշտ գուրկ պիտի ըլլան բաւարար գումարէ:

Աւելին՝ ըստ հետազոտութիւններուն, իմաստուն խաղացողները, որոնք առանց մոլի դառնալու կը փորձեն իրենց բախտը եւ կը սահմանափակեն իրենց նիւթական կորուստը աւելի օգտակար կրնան դառնալ բախտախաղերու վաճառականութեան աճին քան անհաշիւ եւ տեւական խաղացողները:

Գիտնականներուն պատրաստած նոր ծրագիրը խաղացողին կ'ուղարկէ նամակներ, որոնց միջոցով կը թելադրէ, որ խաղացողը հրաժարի խաղէն կամ նուազեցնէ բախտախաղի տրամադրած իր գումարը:

Նշենք, որ այս նախաձեռնութիւնը կ'իրագործուի խումբ մը հոգեբաններու եւ առողջապահական կեդրոններու համագործակցութեամբ եւ հիմնուած է աւելի քան քառասուն տարի տեւողութիւն ունեցող փորձարկումներու եւ ուսումնասիրութիւններու վրայ:

ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ

www.massispost.com
daily news updates

ՅԵՏ ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԸՆԿՆՈՒԾՈՒԹԻՒՆԸ

Քանի մը օրերէ ի վեր արդէն սկսած է նոր տարին՝ վերջ տալով տարուան վերջի հեւքին, տակնուվրայութեան եւ ճնշուածութեան: Ամալներջի տօնական խանաղավառութիւնը եւ պատրաստութիւնը կը խլեն անգործ ժամանակ եւ ուժ կը բանեցնեն սովորականէն աւելի բարձր ճնշուածութիւն: Որքան ալ գեղեցիկ եւ հաճելի ըլլայ այս մթնոլորտը, ունի հետեւանքներ հոգեբանական գեանի վրայ:

Նոր տարուան եւ Ծնունդի տօներու հետեւանքներէն մէկն է ընկճուածութիւնը, որ կը կոչուի «Post Holiday Depression» կամ «Post Vacation Blues»: Երբեմն ճամբորդութեան պարագային այս ընկճուածութիւնը կը կոչուի «Post Travel Depression»: Այս ընկճուածութեան ախտանշանները կը յայտնուին երբ տօնական օրերու արտասովոր ընթացքը աւարտի եւ մարդիկ վերադառնան իրենց բնական առօրեային: Որքան երկար ըլլայ արձակուրդը կամ տօնական մթնոլորտը այդքան կրնայ սաստկանալ ընկճուածութիւնը:

Այս ընկճուածութիւնը կրնայ տարբեր ձեւերով ազդել անձին վրայ՝ պատճառելով կարօտախտ (nostalgia), սաստիկ զգացումներ, յոգնածութիւն եւ այլն: Ներկայ պայմաններով, կարգ մը գործօններ կրնան պատճառել ընկճուածութիւն եւ բազմացնել անոր ախտանշանները: Վերջերս հոգեբաններ նկատած են, որ տօնական օրերէն ետք կարգ մը մարդիկ կ'ունենան յանցաւորի զգացում՝ իրենց ծախսած դրամին պատճառով: Յանցաւորի զգացումը նաեւ կրնայ պատահիլ երբ իրենց ընտանիքէն հեռու ապրող անձեր վերադառնան իրենց տունները: Իսկ ամէ-

նէն հաւանական յանցաւորի զգացումը կը յառաջանայ մարդոց մօտ, որոնք չափազանց շատ ուտելիք կը սպառեն տօնական օրերուն:

Կարեւոր է գիտնալ, որ ամէն մարդ չէ որ կը տառապի ընկճուածութեան ախտանշաններէն յետ տօնական օրերուն: Ոմանց համար շատ դիւրին կ'ըլլայ փոփոխութեան ընթացքը:

Սակայն կարգ մը գործօններ կրնան պատճառել ընկճուածութիւն: 2005 թուականին կատարուած ուսումնասիրութեան մը շնորհիւ ի յայտ եկած է թէ սովորապէս արձակուրդներ չստացող կիներ երկուքէն երեք անգամ աւելի բարձր հաւանականութիւն ունին տառապելու յետ տօնական արձակուրդներու ընկճուածութեան:

Այս բոլորին կողքին, արձակուրդը մեզի կու տայ ազատութիւն՝ կատարելու մեր նախասիրութիւնները, ազատօրէն ընտրելու կարելիութիւնը եւ հետեւաբար մեր կեանքը կառավարելու յաջողութիւնը: Այս բոլորը դժուար է իրականացնել մեր առօրեայ կեանքին մէջ: Հետեւաբար, երբ վերադառնանք մեր առօրեային նշմարելի կը դառնայ մեր կեանքը ամբողջովին կառավարելու ձախողութիւնը եւ այս մէկը կրնայ պատճառ դառնալ նեղութեան եւ տխրութեան:

Շատ մը մարդիկ, երբ տօնական օրերէն ետք դիմագրաւեն զգացական վերիվայրուածներ տարօրինակ կը զգան, որովհետեւ չեն գիտեր թէ ինչու այդ վիճակին մէջ կը գտնուին, մանաւանդ որ շատ ուրախ էին քանի մը օրեր առաջ: Նման ընկճուածութեան գոյութեան մասին իմանալը կրնայ օգտակար դառնալ հասկնալու կացութիւնը:

ՕՁԻ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԶԻՈՒ ՅԱՍԱՐ

Շարունակուած էջ 6-էն

մանալու ձեւերն էլ ընդհանրապէս արխարիկ ու անախտան կը դառնան: Հիմա այնպիսի ժամանակներ չեն, որ թղթի վրայ գրես՝ «Ամէն ինչ լաւ է», կամ տոկոսներ նկարես, ու ինչ-որ մէկը հաւատայ դրան: Եւ ոչ էլ անօթ մտնող խողովակների տէրերն են քնած: Աշխարհը փոխուած է, պահանջները եւ շահերը, եւ դրանց իրագործելու ձեւերն են փոխուած: Մէկ-երկու տարի անց անգամ գոցէ Մնոուդենների (Snowden) եւ Ասանգների (Asang) կարիքը չզգացուի՝ տեխնիկայէս այնպէս հանրայնացուեն աշխարհի ու պետութիւնների գաղտնիքները: Իսկ Հայաստանում քսան-երեսուսու տարի անընդմէջ դաշտում գտնուող նոյն մարդիկ դժուար են ըմբռնում դա, շատերի մէջ բթացել է Հայաստանի պետութեան խոցելիութեան կամ անխոցելիութեան իրական եզրագծի զգացողութիւնը, շատերը թիւրիմացաբար դա չափում են այս պահին ցուրտ սենեակներում տանելի գնով զազ ունենալու հնարաւորութեամբ միայն: Յուրտն առհասարակ սառեցնում է մտածելու բոլորները: Իսկ պատմութեան (ընդհանրապէս՝ կեանքի) ցիկլիկ լինելու բազմաթիւ ապացոյցները ոչ մէկի համար նորութիւն չեն:

Եթէ մեր քաղաքական դաշտը՝ իշխանական թէ ընդդիմադիր, չի օգտագործում կառավարման եւ կառավարմանը հակադէմ շարժում, առաջադէմ երկրներում գործ առաջ տանող մեթոդները եւ շարունակում է սրընթաց փոփոխութիւնների ժամանակ արդիւնառէտ չհակադարձել, ապա կը գան ուրիշները, որոնց համար քաղաքական հեղինակութիւնները ոչ մի նշանակութիւն չեն ունենայ՝ դարձնելու քաղաքականութիւնը ոչ թէ միջոց՝ նեղ խմբերը յարմարաւէտ կեանքն ապահովելու, այլ գործիք՝ իրապէս ապահով Հայաստան ունենալու բոլոր առումներով՝ մտածողութեամբ, արժանապատուութեամբ, կրեատիւ մեթոդներով աշխատեցող տնտեսութեամբ, որպէս Հայաստանի պետականութեան ամրացման գրաւական: Ու հավանաբար, երբ օրերը տաքանան մի քիչ, միաժամանակեայ շարժում կը սկսեն բոլորը՝ եւ եւրոպական մեսիջներ կրողները, եւ ամերիկեան «հաթաթան» տեղ հասցնողները, եւ ուսումնասիրող հակաուսումնական ուժերը: Այսինքն՝ բոլորը կ'արթնանան ձմեռային քնից, եւ միաժամանակ կը լինեն այս բոլորից դուրս գտնուող եւ իքնապաշտպանական բնագոյի հայկական կողմ իրականում կրողները: Այնպէս որ՝ մեր երկկողմանի քաղաքականները մտածելու ժամանակ ունեն միայն այս ձմեռ՝ նոր տարուայ Յունուարի վերջ-Փետրուարը ներառեալ: Յետոյ մեր կարծիքով ականջ ու խելք պէտք կը լինի լսելու ու գտնելու Հայաստանում հնչող բազմաձայն երգչախբի սուպրանոն ու ալտը, բասն ու բարիտոնը... մինչեւ վերջին երանգ ու փորձել զլուխ հանելու: Հա, այսպէս տարին փակուած

է՝ գլխաւոր մտքերը դեռ չարտաբերուած, ճանապարհային քարտէզների բովանդակութիւնը դեռ չգաղտնագերծած, անգամ անցած էտայ «ասոցիատիւրի» վտանգաւոր կէտերը դեռ մինչեւ վեր չհանած՝ էնպէս, դասեր քաղելու համար:

Ընդհանուր առմամբ լիշողութիւն թարմացնելու կարիք չտեսնելով, քանի որ բազմաթիւ լրատուամիջոցների առկայութիւնն, այնուամենայնիւ, թոյլ չի տալիս գոնէ վիզուալ առումով մոռանալ տարուայ իրադարձութիւնները, մի քանի շեշտադրում անենք օրեր առաջ ՄՄ-ին անդամակցելու քարտէզին ու դրա հետ կապուած զարգացումներին: Երբ Ղազարխանի նախագահ Նուբարէյան Նազարբաեւը յայտարարութիւն է անում ու Մաքսային միութեան սահմանների ու Արցախի հետ կապուած՝ յատուկ կարծիքով է միայն ցանկանում Հայաստանի ճանապարհային քարտէզ ստորագրել, հարկ է, որ պատասխանը տեղում տրուի, առանց սպասելու Փութինի կամ մէկ ուրիշի վերաբերմունքին: Թէ չէ տանը, ներքին լսարանի համար արտայայտած կարծիքները ոչ միշտ են արդիւնաւէտ, անգամ եթէ այդ մասին յայտարարում է ՀՀ փոխնախագահը: Գ. Սահակեանն էր մէկ օր առաջ ասել, թէ Նազարբաեւի յայտարարութիւնը Հայաստանի համար անընդունելի է. բա մերոնք տեղում թող ասէին, մի յատուկ կարծիք էլ մենք գրէինք, որ չմտածէին, թէ Հայաստանի գլխին ինչ անեն՝ կ'անցնի: Միւս կողմից էլ՝ ամէն ինչ նոյն ճանապարհով առաջ է գնում, որով սկսել են գնալ՝ ճանապարհային քարտէզ է ստորագրուած, որի 20 բաժնի 262 միջոցառման բովանդակութեան մասին հանրութիւնը տեղեակ չէ ու յետոյ է քննարկելու, գազային պայմանագիր է ստորագրուած՝ առանց հանրութեան հետ քննարկելու, ու յետոյ բերում խորհրդարան, Մաքսային միութեանը միանալու յայտարարութիւն է արւում, ու յետոյ միայն ողջ Հայաստանն այդ մասին իմանում է միանգամից: Ասացինք, չէ, այն, ինչ հանդուրժուած էր օձի տարում, ձիու տարին չի հանդուրժի:

Իսկ այն հանգամանքը, որ ուսու պաշտօնեաները շարունակում են պնդել, թէ Մաքսային միութիւնն ու Միացեալ տնտեսական տարածքը սոսկ տնտեսական կառուց են, դրանց անդամակցելը քաղաքական բովանդակութիւն չունի, պարզ ձեւակապութիւն է, քանի որ ամբողջ աշխարհի քաղաքականութիւնն այժմ եւ միշտ թելադրում եւ թելադրել են տնտեսական գործընթացները:

Հիմա այս բոլորից քաղաքական դաշտը դեռ գլուխ չի հանել՝ իշխանամէտ թէ ընդդիմադիր, ու անկեղծութիւն, ազնուութիւն, ուղղամտութիւն պահանջող ձիու տարում մեր քաղաքական ուժերը կ'ամ պիտի գլուխ հանեն, կ'ամ խոստովանեն, որ չեն կարողանում, ու դիմեն թարմ ուղեղների օգնութեանը:

ՈԱԿԸՊ ԶԱՐԱԳՕԼՈՒՄ՝ ՄԻԱՍԻՆ ՊԵՏՔ Է ԲԱՆԴԵՆՔ ԲՈԼՈՐ ՊԱՏԵՐԸ

Շարունակուած էջ 14-էն

Թուրքիան պէտք է մտածէ, թէ ինչպէս կրնայ յարաբերիլ իր հայ քաղաքացիներուն հետ:

Ճիշդ է՝ Հայաստան եւ Թուրքիա կրնան յարաբերութիւններու ձեւնարկել, ու ատիկա պետական քաղաքականութեան բնական հոսանքն է, բայց այդ բոլոր առկայ իրական խնդիրները չեն կրնար լուծել: Խնդիրը թուրք պետութեան եւ հայկական Սփիւռքին հետ է: Ու Թուրքիա, եթէ կը մտածէ հզօր պետութիւն դառնալու մասին, ապա նախ եւ առաջ ան ստիպուած է մաքրել իր անցեալը: Առանց անցեալի մաքրութեան՝ Թուրքիան չի կրնար կայանալ կամ ուժեղ պետութիւն դառնալ:

Ես կը հաւատամ նաեւ, որ սփիւռքահայութիւնը իրական եւ իրաւական գործընկեր է մեզի համար: Անոնք (Սփիւռքահայերը.- Ս.Ա.) մաս կը կազմեն Թուրքիոյ: Թուրքիա նաեւ պէտք է գիտակցի, որ պատահածը ոճիր է ոչ միայն հայերուն, այլ՝ ամբողջ մարդկութեան դէմ:

Հայերն արդէն հարիւր տարիէ ի վեր կը խօսին Երկիր վերադարձի մը կամ Երկրին մասին: Ուրեմն այս ճշմարտութիւնները տեսնելով՝ Թուրքիա չի կրնար փախուստ տալ Սփիւռքէն, եւ ան պարտաւոր է ընդունիլ ցեղասպանութիւնը, ներողութիւն խնդրել եւ մտածել հատուցումներու եւ գողցուած հարստութիւնները վերադարձնելու մասին: Առանց անցեալը մաքրելու՝ ես այլ ճանապարհ չեմ տեսներ:

ՅԱՒԱԿՅԱԿԱՆ

ՎԱՆԱ ԱՐԱՔՍԻ ԳԱՊԱՐԵԱՆԻ վաղահաս մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեաններ իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ծնողքին, ընտանեկան պարագաներուն եւ մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ճորճ եւ Լուսին Գալուստեաններուն:

Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:



SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

SEROP'S CAFE

GREEK & LEBANESE FOOD

SERVING BATON ROUGE SINCE 1979

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄԸ

Շարունակում է 7-էն

ցեղային ինքնապահպանման եւ ապահովութեան կանոններուն: Ռոպերթսըն այս իրողական վիճակները կը բնորոշէ իբրեւ քաղաքական ինքնութեան ապահովութիւն մը՝ համաշխարհայնացած կարգավիճակին մէջ ստեղծուած: Լեռնային Ղարաբաղի, քրտական հարցը ու տակաւին կիպրոսի թրջական բաժնի իրավիճակները իւրաքանչիւրը ինքն իր պարունակին մէջ իրական վկայութիւնն է այս տեսութեան: Քաղաքական այս ինքնութիւնը՝ տեղական-համաշխարհայնացած հակադիր իրականութեան մէջ, կը յառաջացնէ «մրցակցութեան» իրավիճակը, որ կը դառնայ մղիչ ուժը հաւաքական ինքնութեան հասկացողութեամբ, այս ոչ միայն տնտեսական եւ քաղաքական առումով, այլ նաեւ ճանաչումի եւ ինքնաճանաչումի եւ այլ գործօններու մէջ: Ու տակաւին, այս մրցակցութեան մեկնելով յառաջ կու գան տարբերութիւններու իրավիճակները հաւաքական կեանքին մէջ: Տարբերութիւններ, որոնք եթէ մէկ կողմէ «կը բախին» իրարու (ոչ անպայմանօրէն ֆիզիքական առձակատուով), բայց նաեւ կը մղեն ամրապնդելու ինքնութեան հասկացողութիւնը: Եւ նաեւ՝ նոյն այս ինքնութեան հասկացողութիւնը եւ կերտումը կը ստեղծէ նոյն «խմբակին» մէջ ըլլալու եւ ապրելու կենցաղը՝ որպէս իւրայատուկ եւ նոյնանման նկարագիր եւ ապրելակերպ: Այս նկարագիրը եւ ապրելակերպը, եթէ մէկ կողմէ «կ'ապրեցնէ» անցեալի ցաւը եւ անարդարութիւնը՝ բայց նաեւ կ'օգնէ, որպէսզի անհատը կամ ջոկի իր պատմութեան հետ: Անհատը եւ իր փորձառութիւնը կը կապուին իր հաւաքականութեան պատմութեան եւ փորձառութեան հետ՝ ու «ես»-ը կը փոխակերպուի «մեր»-ի եւ «մենք»-ի:

Տնտեսագէտ Պիլ Միշել կը հաստատէ, որ նոր ճարտարարուեստը եթէ խոստացաւ հարստութիւն, լաւորակ եւ ապահով կեանք, բայց չամբողջացաւ այդ բոլորը աշխարհի 6,5 միլիարդ ժողովուրդի մեծամասնութեան համար, որոնք այսօր կը տառապին անբաւարարութենէ եւ չզոյլութենէ: Ան կ'ըսէ, թէ՛ «ճարտարարուեստը փոխանակ յառաջացնելու մարդկային կեանքը, փոխակերպեց մարդը անմարդկային տուեալներով: Բայց միեւնոյն ժամանակ նոյն այս ճարտարարուեստը ստեղծեց եւ արտադրեց իրարու կապուած եւ իրարու շողկապուած աշխարհ մը, որ նաեւ եղաւ մղիչ ուժը համաշխարհայնացման»:

Իրականութիւն է, թէ ներկայ օրերու երիտասարդին համար այս ճարտարարուեստը եղած է հաղոր-

դակցութեան ընդունելի միջոց: Տեղեկատուութիւնը՝ համացանցին վրայ, ստեղծած է նոր հաւաքականութիւններ, որոնք նոյն ձեւով կը հաղորդակցին իրարու հետ: Այս համաշխարհայնացած երիտասարդական մշակոյթը նաեւ մէկ լաւագոյն միջոցն է նոր սերունդին համար գտնելու-վերագտնելու իր ինքնութիւնը՝ ազգային եւ հոգեկան իմաստով: Ի գուր չէ, որ փիլիսոփայութեան մասնագէտ՝ Մարթին Պարպերօ ներկայ տեղեկատուութիւնը կը նկատէ այնտեղը, ուր ներկայ օրերու մշակոյթը կ'արմատանայ իր հոգեկան գիտակցութեամբ եւ ազգային հպարտութեամբ:

Հոս արժէ ընդգծել անձնական-ընտանեկան ապրուած փորձառութիւն մը: Տղաս, որ 20 տարեկան երիտասարդական հանգրուանի սեմին հայ մըն է, ընկերային հաւաքոյթի մը ընթացքին ծանօթացած է ֆրանսահայ տարեկից երիտասարդի մը, որ միայն գիտէ, թէ հայ է՝ առանց հայերէն կարենալ խօսելու: Երիտասարդը ցաւ յայտնած է տղուս, թէ իր ծնողքը գինք հայ չեն մեծցուցած:

Եթէ ֆրանսահայ երիտասարդին համար հայերէն լեզուն եւ ինքնութիւնը անդրադարձ մըն էր իր կեանքի էությունը, բայց նոյնքան նաեւ տղուս համար վերահաստատում մըն էր իր այն անհրաժեշտութեան, որ ինքնութեան վրայ հիմնէ իր կեանքի առաջադրանքները:

Էրիքսըն ունի բացատրութիւնը այս երեւոյթին: Քաղաքական-ազգային ինքնութեան հասկացողութիւնը յաճախ առնչուած է «հին աւանդէ» վերապրած իրականութեան հետ՝ կրօնական, ցեղային եւ կամ տեղական կապաձուլութեան հասկացողութիւններու մէջ: Էրիքսըն կ'ըսէ, թէ այս երեւոյթին դիմաց յաճախ քննարկուած է՝ իրաւացիօրէն եւ ճշգրտապէս, թէ ինչքան որ քաղաքական-ազգային ինքնութիւնը ունի «աւանդական» պիտակ (իմաստ երեւցող մասը), բայց նաեւ կայ չերեւցող մասը, որ «այժմէականութեան» հետ առնչուած է ու անոր արդիւնքն է: Այն բոլոր գորաւոր զգացումները, որոնք առնչուած են սովորութիւններու հետ՝ մշակոյթ, կրօն թէ՛ այլ, գորաւոր կ'ենթարկուին երբ մարդիկ կ'անդրադառնան, թէ այդ բոլորը պաշարումի եւ կորստելու վիճակի մէջ է...: Ձուկը ջուրին մէջ չ'անդրադառնար ջուրին արժէքին: Երբ ջուրին դուրս է՝ կը զգայ անոր անհրաժեշտութիւնը: Էրիքսըն կ'ըզրակացնէ, թէ քաղաքական ինքնութիւնը հասարակաց զգացում է, եթէ մէկ կողմէ աւանդական, բայց նաեւ այժմէական: Այս համաշխար-

ԽՕՍՔ ԱՄԱՆՈՐԻ ԱԼԲԵՐՏ ԳՐԹԵԱՇԱՐԵԱՆ

Բաժակ՝ Առաջինը՝ բոլոր նրանց Որոնք չկան մեզ հետ այսօր: Եւ երկրորդ՝ վշտիդ անանց Ո՛վ մարդկային սիրտ վիրաւոր:

Բաժակ՝ Բոլոր անոնց՝ որոնց հոգին Եղաւ բացուած հացի սեղան: Եւ ուշացած զինուորներին, Օխանի-ծուխ տուն հայրական:

Բաժակ՝ Եւ ձե՛զ համար իմ հեռաւոր

Իրար թիկնած բիր երդիքներ, Որ ձեր սրտում ունէք հօգօր Սլացումներ երկինքն ի վեր:

Բաժակ՝ Ահա՛ եւ քե՛զ, Մայր ակեհեր, Որ կրծքիդ տակ գիշեր ու տիւ Զսպել ես միշտ ի՛նչ կսկիծներ, Եւ շանթերի տարափ անթիւ:

Բաժակ՝ Եւ քե՛զ, եւ քե՛զ, ո՛վ իմ դու սէր, Որ օրերիս իմ դժուարին, Վառեցիր ինձ յոյսի լոյսեր, Եւ ցնծութեան այս Նոր Տարին:

հայնացած աշխարհին մէջ եթէ կայ գայն (իմա քաղաքական-ազգային ինքնութիւնը) կորսնցնելու փորձառութիւնը, բայց նաեւ առկայ է գիտակցութիւնը գայն պահելու: Որովհետեւ մարդը կ'ուզէ գտնել-վերագտնել իր ապահովութիւնը: Եւ այստեղէն պէտք է փորձել հասկնալ, թէ ինչո՞ւ ցեղային ազգայնականութիւնը, փոքրամասնական շարժումները, քաղաքական կրօնները (ինչպէս՝ քաղաքական իսլամութիւնը) կու տան ապահովութիւն՝ ինքնագիտակցութեան եւ ինքնութեան արժէքին նկատմամբ՝ եւ ինչ որ կրնայ առկայ մնալ աշխարհի շատ մը շրջաններու մէջ՝ մինչեւ որ աւելի լաւ շարժում մը յառաջ գայ...:

Ինչպէ՞ս այս բոլոր տեսադաշտերը եւ տեսանկիւնները պէտք է վերանայիլ հայկական պրիսմակէն... Համաշխարհայնացման այս հսկայ «սպառնալիքին» մէջ եւ դէմ յանդիման ու տեղեկատուութեան աշխարհի յառաջխաղացքի հեւքին մէջ, ուր «երիտասարդական մշակոյթին» հետ շատ դժուար կ'ըլլայ քայլ պահել՝ հայ ինք սերունդին ազգային-մշակութային, լեզուական ու քրիստոնէական ինքնութիւնը պահելու հրամայականով...:

Մեծի Տանն կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետի ընդգծումը յստակ է եւ ուսանելի: «Համաշխարհայնացման հետ բանակցութիւնները թէ խոստումնալից են, եւ միեւնոյն ժամանակ վտանգաւոր: Եթէ մէկ կողմէ կրնայ (համաշխարհայնացումը) ձեւազերծել եւ կերպարանափոխել՝ միեւնոյն ժամանակ հարստացնել: Եթէ համաշխարհայնացման իրավիճակին հետ մեր կապակցութիւնը եւ առնչուածութիւնը ընենք խորունկ ինքնագիտակցութեամբ, թէ մենք ով ենք որպէս հայեր՝ այս մէկը կրնայ հարստացնել մեր մշակոյթը եւ գայն վերածել աւելի ստեղծա-

գործի եւ ուժականի: Ճիշդ չարաբերութիւնը համաշխարհայնացումի հետ պիտի մղէ մեր մշակոյթը որպէսզի վերանորոգէ ինքզինք: Եւ վերանորոգուած մշակոյթը, եւ ինքնութիւնը պիտի քաջալերէ հայը, որպէսզի աւելի լաւ շողկապուի ուրիշ մշակոյթներու հետ: Եւ մշակոյթ մը, որ չի վերանորոգեր ինքզինք՝ դատապարտուած է մահուան: Եւ նոյնքան նաեւ՝ ժողովուրդ մը, որ հաւատարիմ չի մնար իր մշակոյթին՝ պիտի անհետանայ պատմութեան սլացքէն...»:

Համաշխարհայնացումը իրավիճակ մըն է, որմէ կարելի չէ խուսափիլ, ո՛չ ալ կարելի է անտեսել գայն: Ներկայ աշխարհի դրուածքն է ասիկա, եւ հայը նոյնպէս կոչուած է քայլ պահելու ժամանակին հետ: Այս իմաստով արժէ համաշխարհայնացման նայիլ մէկ կողմէ զգուշաւորութեամբ, բայց նաեւ «օգտուելու» տրամադրութեամբ՝ որ կրնայ հայը «հարստացնել»: Տեղեկատուութեան ստեղծած ներկայ օրերու «Համաշխարհայնացած երիտասարդական մշակոյթը» պէտք է օգտագործել՝ հայ երիտասարդին ազգային-քաղաքական «ինքնութիւնը» մէկ կողմէ պահելու, բայց նաեւ շարունակելու եւ զարգացնելու գործընթացով: Համաշխարհայնացման հասկացողութիւնը պէտք է ընկալել որպէս «հրէշային» եւ «քանդիչ» երեւոյթ մը միայն՝ ուր ազգային արժէքներ եւ մշակութային ինքնութիւն կը վերանայ: Համաշխարհայնացումը իրականութիւն մըն է այսօրուան աշխարհին համար, որուն հետ «ճիշդ չարաբերութիւն» մը՝ կրնայ «վերանորոգել» հայը եւ ի մասնաւորի երիտասարդը՝ նաեւ անոր ազգային-քաղաքական մշակութային ինքնութիւնը: Եւ «վերանորոգուած» ինքնութեամբ է, որ հայը պիտի կրնայ նայիլ վաղուան:

ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ

Մանրամասնութեան համար զանգել
Նարինէին
(626) 818-9949
 Հասցէ՝ 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՊԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
 ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

HayastanInfo.net

ՄԻԱՄԻՏ ՅԱՅԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ

ՈՂՋՈՅՆ 90-ԱՄԵԱՅ ԼՈՒՍԱՇՈՂ ՓԱՐՈՍԻՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՏԷՐ-ԳՈՒԼԱՆԵԱՆ

Անկախ պետութիւնը ցանկացած ազգի բարձրագոյն արժէքն է, որին նա հասնում է հազարամեակներով ստեղծած իր հոգեւոր եւ նիւթական մշակոյթով: Եւ եթէ որեւէ մշակոյթ իր ստեղծող ժողովրդին չի հասցնում անկախ պետականութեան, ուրեմն այդ մշակոյթի մէջ մի ինչ-որ խաթար բան կայ:

Ճարտարապետ ընկերոջս հետ Մանթաշով գարեջրատանը նստած խօսում էինք անկախութեան հետեւանքով վերածնունդի մեր հին արժէքների մասին՝ յրնթացքնարկելով նաեւ մայրաքաղաքի կառուցապատումը եւ ամբողջ հանրապետութեան այսօրուայ ճարտարապետական տեսքը, որը խորհրդային պլանային շինարարութեան պարտադրանքից ազատագրուած, կարող է շատ գեղեցիկ եւ առինքնող դառնալ՝ ազգային կնիքը վրան:

Եւ այդտեղ էր, որ ես զարմանքով մի բան պարզեցի. որ մեր հանրապետութիւնը չունի գլխաւոր ճարտարապետ, այսինքն թէ՛ մի տաղանդաւոր մարդու, մի կենտրոնի հայեացք, որը կը հետեւէր ամբողջ երկրի գեղագիտական տեսքին, ինչը որ ժամանակին, լինելով նոր անկախ Հանրապետութեան գլխաւոր ճարտարապետ, անում էր Ալեքսանդր Թամանեանը:

Այդպէս նստած մի գաւաթ գարեջրի շուրջ գրուցում էինք, երբ մեզ համար անսպասելի ներս մտաւ եւ մեր կողքի սեղանին նստեց դարաբաղեան ինդրի կարգաւորման արդէն միջազգային համբաւով եռեակը, եւ անմիջապէս էլ մեր մէջ արթնացաւ աւանդական միամիտ հայը:

Սկզբում ուզեցինք ինչ-որ բանով հիւրասիրել, բայց իրենք էլ էին գարեջուր խմում, եւ հիւրասիրու-

թեան իմաստը մի տեսակ դարձաւ անյարմար ու կորաւ: Բայց միամիտ հայը շարունակում էր խօսել մեր մէջ եւ յուշում էր երկտող գրել, որ Ղարաբաղի ինդրը միայն Ղարաբաղի եւ Հայաստանի ինդրը չէ, այլ ամբողջ աշխարհինն է:

Ուստի կարեւորելով մեծ տէրութիւնների շահերը՝ հարցին պէտք է մօտենալ նաեւ խղճով, որը բարձր է ամէն ինչից: Ուզում էի այդպէս էլ գրել: Թէպէտ ընկերս հրաշալի ֆրանսերէն է խօսում, բայց մտածում էինք, որ այդ երկտողը անգլերէնով պէտք է լինի, նոյնիսկ թարգմանիչ-մատուցող գտանք: Եւ երբ աղջիկը երկտողը արդէն թարգմանում էր, ընկերս ու ես սթափուեցինք ու զարմացած նայեցինք իրար եւ անխօս հասկացանք մեր քայլի անիմաստութիւնը:

Դա գրեթէ նոյնն էր, ինչպէս տարիներ առաջ ես Գորբաչովին Գարուն ամսագրի նշանով գրիչ նուրբեցի՝ ինդրելով, որ դրանով ստորագրի Ղարաբաղի ինքնորոշման փաստաթուղթը, իսկ Գորբաչովը վերցրեց գրիչը, շնորհակալութիւն յայտնեց ու ժպտալով սասց՝ կակուզ ուռչկի ներսկատալա... (միայն գրիչը պակաս էր...):

Այսքան բան: Ուղղակի միամիտ հայը անվախձան է մեր մէջ: Խրիմեան Հայրիկը լաց եղաւ Բիսմարկի մօտ Հայոց փրկութեան համար, եւ ի՞նչ եղաւ. Բիսմարկը մեր վեհափառին թաշկինակ նուրեց, որ արցունքները սրբի...

Ինչեւէ, այսօր արդէն Նոր Տարի է, հաւատանք, որ նոր կեանք ենք մտնում: Իսկ միամիտ հայը թող շարունակի ապրել մեր մէջ, բայց մեր խղճի սթափութեան հաստատուն կնիքը վրան, իսկ մենք մնանք մեր յաղթանակի, մեր ոգու տէրը...

Միեւնոյն է՝ Ղարաբաղը մի օր վերջնական ազատ է լինելու, քանի

Շարունակուած էջ 13-էն

ականներուն, ազգային կարկառուն գործիչներ Գերշ. Գնէլ Արք. ձեռնեանը եւ Յարութիւն Կուժունին ջանադիր եւ տքնաջան հանգանակութեամբ մը «Սահակեան»ը օժտելով նորակառույց շէնքով, անոր հիմքը դրին Հայաստանէն բերուած տուֆ քար մը՝ որպէս կենդանի փաստ հայրենիք-Սփիւռք գործնական շարժումին: Մանաւանդ ամերիկահայ համակիրներ եւ ազգայիններ սրտաբուխ նուիրատուութիւններով նոր «Սահակեան»ը ընդմէջէն տեսան վաղուան հայրենասէր եւ ազգանուէր շրջանաւարտները, ազգին եւ Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան պիտանի եւ օգտաշատ քատրերը: «Սահակեան»ը պիտի դառնար դարբնոցը գաղափարական ու ազգային գործիչներու կերտումին. առանցքը լիբանանահայութեան կրթական կեանքին: Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճը հովանաւորեցաւ Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան (Հ.Կ.Բ.Մ.) կողմէ: Անոր հաւատաւոր եւ յանձնառու պատասխանատուները ոգի ի բոխն պինդ պահեցին եւ կը պահեն «Սահակեան»ի ազգանպաստ երթը. դպրոցը կը մնայ ուշադրութեան սեւեռակէտը Հ.Կ.Բ.Մ.-ի դեկավարութեան, որ վճռած է նոր ու պանծալի էջեր արձանագրել «Սահակեան»ի յուշամատենին մէջ: Վերջապէս նպատակը տկարութիւն չի ճանչնար եւ յատկապէս ազգանուէր ու մարդասէր նպատակ մը:

Այսօր, Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի շրջափակին

մէջ տեղադրուած մեծանուն յեղափոխական ու նահատակ Փարամազի կիսանդրիին վրիժաբիբ հայեացքը գաղափարական ոգի եւ պահանջատիրական աւիւն կը հաղորդէ վարժարանին: Բանաստեղծ ու նահատակ Ռուբէն Սեւակի անուան գրադարանը հոգեմտաւոր եւ ազգային աւիշ կը ներարկէ վարժարանէն տողանցող սաներուն: Շքեղակառույց «Բերսաբէ ձեռնեան» սրահը մշակութային կենսունակութիւն կը տրամադրէ հնչակեան շրջանակին: Այս բոլորը «Սահակեան»ը կը վերածեն փոքրիկ Հայաստանի, ազգապահպանման ջերմ օճախի եւ կրթամշակութային միջնաբերդի: Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճին 90-ամեակին առիթով ողջոյն լուսաշող փարոսին, անոր անդենականի եւ ասդենականի (ներկայ) բոլոր ծառայողներուն. Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան եւ Հ.Կ.Բ.Մ.-ի ղեկավարութեանց, անոր բարերարներուն, հոգածու մարմիններուն, տնօրէններուն, ուսուցչական կազմերուն, դաստիարակներուն, կրթական մշակներուն, համակիրներուն, սաներուն, շրջանաւարտներուն եւ բոլոր անոնց՝ որոնք կը հաւատան «Սահակեան»ի նուիրական երթին ու առաքելութեան: Թող 90 ամեակը ըլլայ խթան ու մեկնակէտ աւելի պայծառ եւ լուսասփիւռ ապագայի:

**ՈՂՋՈՅՆ 90-ԱՄԵԱՅ
ԼՈՒՍԱՇՈՂ ՓԱՐՈՍԻՆ
(ՍԱՀԱԿԵԱՆ-ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ
ԳՈՂԷՃԻ 90 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻ-ԹՈՎ)**

«ԱՐԱՐԱՏ»

որ չի կարելի սպանել որեւէ ժողովրդի հաւաքական կամքը, եթէ այդ ժողովուրդը ինքը չուզէ անհապապ լինել: Իսկ մենք անյու-

սահատ ապրող ցեղ ենք: Ինչեւէ, շնորհաւոր Նոր Տարի եւ փառք մեր հնամեայ արեան յետագծին:





We are open for business, and here to wish you happy holidays!

<p>Concetta Smarius Avo Markarian 700 N. Central Ave., Ste. 340 Glendale, CA 91203 818-844-2555</p>	<p>Donna Owen Gary Ketenchian 16501 Ventura Blvd., Ste. 607 Encino, CA 91436 747-233-3500</p>	<p>Stacey Peterson Richard Glass 2801 N Ventura Blvd. Bldg G Oxnard, CA 93036 805-973-8540</p>
--	--	---

BankWithArgent.com
